

320  
Q-23

*Կրօնական Գրքանոց*

ԱՅ ԵՎ ԲՈՒՐԴ  
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ  
ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ


320  
9-23

ԿԱՌԱՅՆԵ ԶԱԶԱՆԻ

ՀԱՅ ԵՎ ՔՈՒՐԴ  
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ  
ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

256

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1965



Այս աշխատությունը ելքերված է հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը, Հեղինակը համառոտակի շարազրել է նրկու ժողովուրդների անցյալի պատմության այն կարեւոր դրվագները, որոնք ցույց են տալիս նրանց անտեսական ու կուլտուրական փոխհարաբերությունները և բարեկամությունը: Այդ բարեկամությունը լենինյան ազգային բազարականության շնորհիվ մի նոր բովանդակություն է ստացել Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ սեռւյոցիայից հետո:

Чачани Карлене Арамович

Из истории дружбы армянского  
и курдского народов  
(На армянском языке)  
Издательство «Аластан»  
Ереван, 1965

## ՀԱՅ ԵՎ ՔՈՒՐԴ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒ- ԹՅՈՒՆՆ ԱՆՅՅԱՎՈՒՄ

Պարերի խորքից է գալիս հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը: Պատմական տարեկրությունները վկայում են, որ այդ երկու հարևան ժողովուրդները անցել են միևնույն պատմական ուղիով, ապրել կողք-կողքի, նրանք բազմիցս պայքարել են օտարերկրյա նվաճողների դեմ, որպեսզի փրկվեն ֆիզիկական բնաշնչումից ու կործանումից:

Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության մասին պատմարան կեոն գրում է. «...դարավոր մտակ հարաբերությունները, անշուշտ, փոխադարձ ուժեղ ազդեցություն են տարածել երկու ժողովուրդների միջև, նույնացնելով նրանց կուլտուրական կյանքի շատ երևույթներ: Մենք ունենք 1-ին դարում ապրած Ստրաբոնի վկայությունը,

որ գտնում է, թե հայերն ու մարերը մի ազգ են, այնքան մեծ էր նրա առևտած այս երկու ժողովուրդների նմանությունը հագուստի, բարքերի, նույնիսկ և լեզվի կողմից: Սրա պես ուրիշ ցուցմունքներ էլ կան, քա՛վարար՝ ապացուցելու համար, որ դեռ հին ժամանակներից Հայաստանի արևելյան ու հարավային մասերում տեղիցված էր մի կուլտուրական միջավայր, ուր հայերն ու քրդերը փոխադարձ շփումներով ու ազդեցություններով հարուճ էին մի ընդհանուր համայնական աշխարհայացքի, մի ընդհանուր կարգի»<sup>1</sup>:

Քրդերը հայկական տերիտորիայում առաջին անգամ երևացին IX—X դարերում: Քրդերի մի մասը, լինելով խաշնարած, լավագույն արուսավայրեր որոնելու համար հարյուրավոր կիլոմետրեր ճանապարհ են անցել, հարմարավետ տեղ գտել և բնակություն հաստատել այդտեղ: Քրդերին հատկապես գրավում էր հիաքանչ արուսավայրերով հարուստ հայկական լեռնաշխարհը: Ուշագրավ է այն հանգամանքը, որ հայ աշխատավոր ժողովուրդը միշտ էլ աշխատավոր քրդերին ընդունել է որպես բարեկամի: Նույնը փոխադարձաբար տեղի էր ունենում նաև քուրդ աշխատավորների կողմից: Սակայն քրդերի վերաբնակեցում կա-

տարվում էր նաև օտարերկրյա զավթիչների կողմից, որը միշտ ունեցել է շահագիտական նպատակ՝ միմյանց դեմ հրահրել այդ ժողովուրդներին, կազմակերպել ազգամիջյան շարքեր: Այդ կարգի վերաբնակեցումը իրականացվում էր բռնի միջոցներով: Եվ ինչպես ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանն է ասում. «Սուլթանական կառավարությունը դիմում էր պրոպոկացիոն միջոցների, որպեսզի խափանի հայ-քրդական միությունը, ամեն կերպ հրահրում էր քրդերին հայերի դեմ, արհեստականորեն առաջ էր բերում թշնամանք հարևան ժողովուրդների մեջ»<sup>1</sup>:

Ինչպես քուրդ նշանավոր ազգագրագետ ու պատմաբան Մախմուդ Քալազդիին է նշում, քրդերը, որոնք բնակվում էին հայկական գյուղերում, հայերի հետ լավ հարաբերությունների մեջ էին, հարավում ու սիրված էին հայ ընտանիքների կողմից<sup>2</sup>:

Քուրդը, բնակվելով հայկական գյուղում, ամեն կերպ աշխատում էր բարեկամանալ հայի հետ, մասնակցել նրա խնջույքին, ծխակատա-

1 Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը Թուրքական բռնապետության դեմ, 1850—1870 թթ., 1955, էջ 10:

2 Տե՛ս, Мела Махмуд Байзыди, Нравы и обычаи курдов, Москва, 1963, стр. 52.

<sup>1</sup> Առ, Հայոց պատմություն, հատ. 2, 1947, էջ 661:

բությանը, բաժանել նրա ուրախությունն ու վիշաբը:

Լինելով հարեաններ, նրանք հավասարապես խոսում էին երկու լեզուներով: Քուրդ գյուղացիին երբեք տարբերություն չի դրել իր և հայ գյուղացու ընտանիքի անդամների միջև:

Այդ առթիվ «Մշակ»-ը իր հոդվածներից մեկում գրում է. «Քուրդ ցեղերը բնավորությամբ շատ մոտ են հայերին: Հայ գյուղում մի քանի տարի ապրելով, քուրդ ընտանիքը սկսում է ընտելանալ հայ գյուղացու ապրուստի եղանակին, նրա նիստուկացին. քուրդն սկսում է ուսումնասիրել հայ լեզուն, հաճախում է նաև նրա հարսանիքին և վերջապես սկսում է ներշնչվել հայկական ոգով և հայ ընտանիքի հետ միասին զանազան ուխտատեղիք զնալ: Նա այնպես պարզ է խոսում հայերեն լեզվով, որ ոչ ոք չի կարող նրան տարբերել հայից»<sup>1</sup>:

Արժև նշել, որ նույն փոխադարձ հարգանքն էին վայելում այն հայերը, որոնք բնակություն էին հաստատել քրդական գյուղերում: Բազմաթիվ հայ ընտանիքներ ապրում էին պարսկական Քուրդիստանում՝ Ուրմիո ծովի հարավային ափերում եղած քրդական գյուղերում: Այստեղ չկար մի քրդական գյուղ, որտեղ բնակություն

հաստատած չլիներ թեև որ մեկ կամ մի քանի հայ ընտանիք: Հայեր բնակվում էին նաև Սուլզուզ, Սոուզ-Քուլազ և Միանզուվար գավառներում, որտեղ բնակիչների գերակշռող մասը քրդերն էին: Հայերը, ցրված լինելով այս գավառների քրդական գյուղերում, հետզհետե, տարիների ընթացքում, ընդօրինակել են քրդերի սովորությունները, նիստուկացը, ազգային տաղաքը:

Հայ և քուրդ աշխատավորները, դարեր շարունակ լինելով հարեաններ, դտնվել են սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում, շահագործման ենթարկվել թե՛ ներքին, թե՛ արտաքին կեղերիչների կողմից, որը իր կնիքն է դրել այդ երկու ժողովուրդների քաղաքական ճակատագրի և հոգեոր կյանքի տարրեր բնագավառների վրա:

Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունն իր լավագույն արտացոլումն է դրել Գերսիմում ապրող հայերի և քրդերի փոխհարաբերության մեջ: Գերսիմի քրդերը հայերի նկատմամբ ունենն մեծ վստահություն, նրանց ճանաչում էին որպես իրենց ամենամոտ և ազնիվ բարեկամներին:

Պատմական բազմաթիվ տեղեկություններ վկայում են, որ Գերսիմում XIX դարի առաջին բաուրդում բնակվում էին մոտ 500—600 հազար հայեր և քրդեր: Այդ մասին դեբախմի Գ. Հալաչյանն իր հիշողություններում նշում է, որ Գերսի-

<sup>1</sup> «Մշակ», № 119, 1890,

մում այդ նույն ժամանակամիջոցում ապրում էին 600 հազար հայ և բուրդ, իսկ Բուրբերը բնակչության շնչին տոկոսն էին կազմում: Դերսիմի 19 քաղաքներում և 470 գյուղերում, Հալաշյանի վկայությամբ, հայերը և բրդերը միասին էին ապրում<sup>1</sup>:

Դերսիմցի բրդերը ավելի սերտ հարաբերությունների մեջ էին Միրազյան հաշիվական զերգաստանի հետ: Այս զերգաստանին պատկանող հայերի ու այդ գավառում ապրող բրդերի տարազը իրար շատ նման էր: Նրանք հավասարապես խոսում էին երկու լեզուների քարքառներով և հեշտությամբ հաղորդակցվում: Սահայն, ինչպես Անդրանիկն է ասում իր «Դերսիմ, ճանապարհորդություն և անգեկություն» գրքում, «Դերսիմի բրդերը իրենց զրացի հայերի՝ Միրազյանների հետ Բեն մոտիկ արյունակցություն կամ խնամիություն չունեն, բայց, այնուամենայնիվ, սերտ կապ ունեն նրանց հետ: Նրանք ոչ միայն իրենց զրացի հայերին, այլև բոլոր հայերին առանձին համակրանք են ցույց տալիս, որպես, ինչպես նրանք են ասում, եզբայրների Քրդերը միշտ սերտ հարաբերությունների մեջ են հայերի հետ:

<sup>1</sup> Տե՛ս ՀԹԹ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության արխիվ, Գ. Հալաշյանի ձեռագիր աշխատություն, սելսիմի Դերսիմի ազգագրության», էջ 410.

նրանց տները հյուր կլինեն, նրանց եկեղեցիները և վանքերը ուխտ կզնան, նրանց լեզուն լավ կերպով տիրապետում են»<sup>1</sup>:

Դերսիմի հայերը ամեն մի նեղություն զեպրում դիմում էին իրենց բուրդ բարեկամներին, նրանք օգնության համար ոչինչ չէին խնայում:

Դերսիմի բրդերի մասին մի հեղինակ գրում է. «Չի կարելի զանց ընել հոս հիշատակությունը այն հիանալի հյուրասիրության և պաշտպանության, զոր Տերսիմի զղլբաշ բրդերը ցույց տվին իրենց հալածական ու փախստական հայ դրացիներուն: Անոնք ամխենքով ու տարիներով հազարավոր հայ փախստականներ պահեցին և ապրեցուցին իրենց մեջ...»<sup>2</sup>:

Արալխով, Դերսիմի հայերի ու բրդերի բարեկամությունը ձևավորվել է դարերի ընթացքում:

Նույնպիսի բարեկամական հարաբերությունների մեջ էին Շատտիի, Վանի հայերն ու բրդերի: Սրանց նիտոսկոցը, պաշտամունքները այնքան էին իրար նման, որ գծվար էր մեկը մյուսից զանազանել:

Շատտախում կար բազմաթիվ հայիական և բրդ-

<sup>1</sup> Անդրանիկ, Դերսիմ, ճանապարհորդություն և անգեկություն, Քիֆիս, 1900, էջ 200:

<sup>2</sup> Մ. Մինոսյանց, Տալոսյան եզրայրակցություն, 1923, էջ 61.

զական գյուղ՝ 700 հայ և 550 քուրդ ընտանիքներով: Սրանք իրար հետ ապրում էին շատ համեմատաբար: Քուրդ և հայ առյան՝ երկրագործ նույն վիճակի մեջ էին<sup>1</sup>:

Ամբողջ Արևմտյան Հայաստանում ծանր ու տանջալից է եղել հայ և քուրդ աշխատավորների վիճակը: Նրանք մշտապես ենթակա էին ֆիզիկական բնաջնջման վտանգին, տնքում էին շահագործող վերնախավի լծի տակ: Նրանց վրա հատկապես ծանրացել էր հարկալին քեռը: Տասնորդը (աշարը) սարսափելի էր գյուղացու համար: Նա տալիս էր անշարժ գույքի տուրք, արտավաճքի հարկ, վատտակի հարկ, ճանապարհի պարհարակ, դիսվորական հարկ և քաղմաթիվ այլ հարկեր: Գյուղացուց խլվում էր նրա քերքի մեկ քառորդը: Քուրք փաշաները հարկերի դանձումը հանձնում էին հայ ամիրաներին և քուրդ բեգերին ու աղաներին: Սրանք էլ իրենց հերթին ավելացնում էին հարկերը՝ իրենց բաժինը հանելու համար:

Արևմտյան Հայաստանում բնակվող հայ և քուրդ աշխատավոր գյուղացու այս տխուր ու շարքաջ կյանքը հետևանք էր թուրքական ռազմա-ֆեոդալական բռնապետության: Կ. Մարքսը

<sup>1</sup> Տե՛ս Գիվան Հայոց պատմության, գիրք ԺԳ, Քիֆիս, 1915, էջ 261:

գրում է. «Քուրքիայում ախրող ֆեոդալիզմը իր ամենամանր և բարբարոսական ստադիայում է գանվում»<sup>1</sup>:

Սակայն, շնայած թուրքական կառավարության ազգամիջյան հրահրումներին և ռազմա-ֆեոդալական դեպոտիզմին, XIX և XX դարերի սկզբներին Արևմտյան Հայաստանում գնալով ամրացնելով էին հայ-քրդական բարեկամական կապերը. մի բարեկամություն, որը արտացոլում էր այդ երկու բախտակից ժողովուրդների սոցիալ-տնտեսական փոխադարձ կապերը:

Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը առավելապես դրսևորվել է կուլտուրական կապերի ապարհեզում:

Քուրդ ժողովրդին խավարից հանելու համար իրենց օգնության ձեռքն են մեկնել այդ ժամանակվա հայ մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչներ, որոնք ամեն կերպ ձգտել են այն իրագործել քրդերի մեջ լուսավորություն տարածելու միջոցով: Քրդերը զրկվել էին գիր ու գրականությունից, քրդական գյուղերում չկային զգրոցներ: Սակայն, շնայած դրան, հայ գյուղացին համազում էր իր քուրդ բարեկամին, որ նա իր երկխային ուսման տա, աջակցում էր, որ քուրդ

<sup>1</sup> К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, том IX, стр. 374.

երեխան կրթութիւնն ստանաւ: Շատ ղեպերում էլ հայ մտավորականութեան ներկայացուցիչները մեկնում էին բրդարնակ գյուղերը՝ բուրդ ազգաբնակչութեան մեջ լուսավորութիւնն տարածելու, բրդական դպրոցներ բացելու համար:

Քրդերին զրպեղ գործնելու, նրանց լուսավորելու գործում մեծ աշխատանք էր տանում Մկրտիչ Տիգրանյանը, որը, շրջելով Հայաստանի բերդարնակ շրջանները, ամենուր բարոզում էր հայ և բուրդ բնակչութեանը, որ իրենց երեխաներին ուսման տան, կազմակերպում էր դպրոցներ բացելու գործը և այլն: 1841 թվականին Տիգրանյանը կազմում է մի ծրագիր, որը կոչվում էր «Կանոնք բարեկարգութեան Քյուրդիստանի և Հայաստանի վանօրեից և վիճակաց նոցին»<sup>1</sup>:

Այս ծրագրի հիմնական նպատակն էր բրդական և հայկական հետաժնաց շրջաններում տանել լուսավորչական լայն աշխատանք և դպրոցներ բաց անել: Այս ծրագիրը բննադատվում և զիտադրութեան էր հանդիպում հայ պահպանողականների կողմից: Չնայած դրան, Տիգրանյանը համատրեւն ձգտում էր զրույթ բերել իր ծրագիրը:

1850 թվականին Տիգրանյանը, զպրոցական գործը կազմակերպելու նպատակով, մեկ-

նում է Մուշի և Գիարբերքի շրջանները: Սակայն սկսվում է ռուս-թուրքական պատերազմը, և 1854 թվականին Քուրբեյում Եզգանշիրի գլխավորութեամբ ոտքի է կանգնում բուրդ ժողովուրդը, սկսվում է ազգային-ազատագրական պայքարը թուրքիայի դեմ: Երկրի այդ ներքին խառը վիճակը թույլ չի տալիս Տիգրանյանին այդ տարիներին իրագործելու իր նպատակը: Գրանից հետո, 1860 թվականին, հայ և բուրդ երեխաների համար կազմում է «Այրբեհարան բրդերեն և հայերեն» վերնագրով մի դասագիրք: Այս գրքի մի էջը հայերեն էր, մյուսը՝ բրդերեն և կազմված էր հարկական տառերի հիման վրա, հարմարեցված բրդերեն լեզվի հնչյունաբանութեանը<sup>1</sup>:

Փաստորեն Տիգրանյանն առաջինն էր, որ մեկուսացյան տառերով բրդերեն այբբենաբանը կազմեց:

Տիգրանյանը հասկանում էր, որ մենակ դժվար է այդ ծրագիրը իրագործել, ուստի նա իր շուրջին է համախմբում այդ ժամանակվա մի քանի հայ առաջավոր մտավորականների և 1860 թվականին Կ. Պոլսում կազմակերպում է «Բարեկարգութիւնն արեւելյան» անունով մի բնկերու-

<sup>1</sup> Հայերի գործոց և աշխատութեանց Տիգրանյան, Կ. Պոլիս, 1864, էջ 10.

<sup>1</sup> Տե՛ս Այրբեհարան բրդերեն և հայերեն («Այբֆակեթիզ գուրմանշի ու արմենի»), Կ. Պոլիս, 1860:



ԱՅՏԻ ԱՅՐԻՆԵ ԿԵՐԵՆ

ՔՐԻՍՏՆԵՆ ԵՒ ՏԵՍԵՐԵՆ

ԱԼԻՑՊԷՆՏԻՑ

ԳՈՒՐԲԵՆՆԵՐ ԵՒ ԿԵՐԵՆ

ՅՈՐԴՈՒՄ ԵՒ ՆՍՏՐԱՆԵՆԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
Ի Տ՝ ՄԳՐՏԻՉ ԳԼԿՐԱՊԵՏՆԻ ՏԻՎՈՒՆԵՆԸ  
ՈՍԿԱՆՏԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՆ՝ ԳՂՈՒՉ

Ի ԿՍՏՆՆՈՒՄԻՆԻ ԿՆ՝ ԳՂՈՒՉ  
ՔԵՆՏՐՈՆ ԿՍՏՆՆՈՒՄԻ ԿՍՏՆՆՈՒՄԻ  
Ի ԿՍՏՆՆՈՒՄԻ ԿՍՏՆՆՈՒՄԻ ԿՍՏՆՆՈՒՄԻ  
ԿՍՏՆՆՈՒՄԻ ԿՍՏՆՆՈՒՄԻ ԿՍՏՆՆՈՒՄԻ  
ԿՍՏՆՆՈՒՄԻ ԿՍՏՆՆՈՒՄԻ ԿՍՏՆՆՈՒՄԻ



1860 թ. Մ. Տիգրանյանի կողմից կազմված առաջին հայաստան տրեդերստի արձանագրությունը:

Յյուն, որին ակտիվորեն մասնակցում էր «Մե-  
զու»-ի խմբագիր Հարություն Սվանյանը<sup>1</sup>:

Ընկերության անդամների անմիջական աջակ-  
ցությամբ Տիգրանյանը 1886 թվականին քրդա-  
խոս հայերի համար հրատարակում է իր կազմած  
կրկրորդ հայաստան գիրքը՝ «Ապստեր լուսատուս  
(«Չրայի բռնի»)»<sup>2</sup>, որը զժվարությամբ սպազորում  
է տարածում է քրդաբնակ շրջաններում, բայց  
անում դպրոցներ: Տիգրանյանի այդ նախածնու-  
նությունը բուրդ ազգաբնակչության մեջ մեծ հե-  
տադրություն առաջացրեց դեպի գիրն ու գրա-  
կանությունը, իսկ հայ գրագետ ազգաբնակչու-  
թյունը ակսեց ամեն կերպ աջակցել նրան:

1880-ական թվականներին Արևմտյան Հայաս-  
տանում հայ մտավորականության կողմից կազ-  
մակերպված մի շարք ընկերություններ զգալի  
աշխատանք են տանում հայ և քուրդ ազգաբնակչու-  
թյան մեջ լուսավորություն տարածելու, գյու-  
ղերում դպրոցներ բացելու ուղղությամբ, գրա-  
նով իսկ արժատապնդելով հայ և քուրդ ժողո-  
վուրդների բարեկամությունը: Այդ տարիներին  
Դիարբեքիի գավառում կային այսպիսի ընկե-

<sup>1</sup> Տճ՝ Մ. Նալբանդյան, Անտոյ Երկեր, Ա. Գ. Հովհաննիս-  
յանի կամեոտաբրայով, Երևան, Մոսկվա, 1935, էջ 405:  
<sup>2</sup> Տճ՝ «Ապստեր լուսատուս («Չրայի բռնի»)», Կ. Պոլիս,  
1886:


րություններ՝ «Կարոցական արեւելյան» և «Խի-  
զանիս: Գրանք իրենց ծրագրում նախատեսել  
էին հայկական և քրդական դյուղերում բաց անել  
ղպրոցներ, որոնցում առաջում պետք է ընթա-  
նար հայերեն լեզվով, բայց բացառված չէր, որ  
ընթանառ նաև քրդերեն լեզվով: Այս նպատա-  
կով այդ երկու ընկերությունները նույն թվակա-  
նին իրենց առաջին գործողությունները սկսում  
են Մուշի, Բիթլիսի, Այաշկերտի շրջաններում,  
որտեղ և նրանց հաջողվում է նաև բաց անել բա-  
զական թվով քրդական զպրոցներ: Այդ տարիներ  
ին հիմնվում է մի զպրոց ևս, ուր միասին սո-  
վորում էին հայ և քուրդ երեխաները:

Այնուհետև 1880-ական թվականներին հայ  
պրոգրեսիվ մտավորականներից մեկը՝ նորա-  
տունկյանը, արժարժում էր այն միտքը, թե պետք  
է ուղիներ փնտրել սևումնասիրելու քրդերի վի-  
ճակը, օգնելու, մերձենալու նրանց:

Ինչպես նա, այնպես էլ արևմտահայ մտա-  
ծողներ Մ. Մամուրյանը, Շ. Մվաճարյանը, Գր. Չի-  
լինկիրյանը և մյուսները շնայած ատելություն  
էին լցված քուրդ շենխերի, աղանների, բեյերի,  
բոլոր կնիզբիշների դեմ, առաջ էին քաշում հայ ն  
քուրդ աշխատավոր ժողովուրդների միջև բարեկա-  
մություն ստեղծելու, նրանց մեջ լուսավորություն  
տարածելու, քրդերի նկատմամբ թուրքական կա-  
ռավարության կեղծ սիրաշահումները՝ նրանց հան-

գամանորեն պարզաբանելու և հայ ու քուրդ ժո-  
ղովուրդների դարավոր բարեկամությունը սամա-  
սեղելու հարցերը: Նրանք գտնում էին, որ պետք  
է բարեկամություն հաստատել քրդերի հետ, նրանց  
մեջ սերմանել լուսավորության պատուը, որը կը-  
հասցնի այն բանին, որ այդ երկու ժողովուրդները  
միասնական կերպով հանդես գան թուրքական  
կառավարության դեմ: XIX դարի արևմտահայ  
գրականություն, առավելագույն հասարակական  
մտքի պատմության և հայ ազգային-ազատագրա-  
կան շարժման գաղափարախոսության աշանավոր  
ներկայացուցիչ Մատթևոս Մամուրյանը գտնում  
է, որ վաղ թե ուշ բոլոր ճնշված ժողովուրդները  
կազատագրվեն օտար ճնշողներից, ձեռք կրերեն  
ինքնուրույնություն, և նրանց միջև կստեղծվի ա-  
մուր եղբայրական կապ:

Մամուրյանը այդ թվականին շուշափեց նաև  
քուրդ ժողովրդի հարցը, նրա և հայ ժողովրդի  
հարաբերությունների հարցը ու պարզաբանեց,  
թե ինչ դիրք պետք է բռնել քրդերի նկատմամբ:  
Նա մինչև վերջ այն կարծիքին էր, որ պետք է  
ստեղծվեն բարեկամական ամուր կապեր հայ և  
քուրդ ժողովուրդների միջև, սակայն նա սուր  
քննադատության էր ենթարկում լուսավորության  
միջոցով քրդերին հայերի մեջ ձուլելու, նրանց



ասիմիլյացիայի ենթարկելու գազափարի ջատագովներին<sup>1</sup>:

Այսպիսով, հայ մտավորականության առաջավոր ներկայացուցիչները ամենուր ջանում էին, որպեսզի հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունն է՛լ ավելի ամրապնդվի, և նրանց միջև ստեղծվի մի ամուր դաշինք, քանի որ այն դրական ազդեցություն կունենա հայ և քուրդ ժողովուրդների ազատագրական պայքարի գործում:

Պետք է պարզորոշ կերպով ասել, որ ոչ մի ազգ քուրդ ժողովրդի լուսավորության ասպարեզում այնքան գործ չի կատարել, այդ ուղղությամբ արքան չի մտահոգվել, որքան հայ ժողովուրդը:

Սակայն կղերա-ֆեոդալական և բուրժուա-նացիոնալիստական պատմագրությունը ժխտում է հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը, նրանց համատեղ պայքարը թուրքական և պարսկական բռնակալների դեմ, կուրտուրական և տրեւեսական բնագտնումներում նրանց համագործակցությունը: Բուրժուա-նացիոնալիստական պատմագրությունը պատմական փաստերի վրա նայում է լուկ իր զասակարգային շահերի տեսակետից և խեղաթյուրում իրական փաստերը:

<sup>1</sup> Տե՛ս «Արեւելյան մամուլ», 1880, էջ 85:



Ինչպես նշեցինք, հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունն ունի դարերի պատմություն. բարեկամություն, որը փայլուն կերպով արտահայտվել է հասարակաւ օտարերկրյա գավթիչների դեմ նրանց համատեղ պայքարում: Հայ և քուրդ ժողովուրդները դեռևս V դարում միասնական կերպով են հանդես եկել արտարին թշնամիների դեմ: Եվ գնալով այդ երկու ժողովուրդների միասնական պայքարը ուժեղանում ու նոր բովանդակություն էր ստանում:

Հայ և քուրդ ժողովուրդները միասնական ուժերով հանդես են եկել նաև թաթարների միահեծան իշխանության դեմ: Երբ 1387 թվականին (ևնկթեմուրը արշավեց Հայաստանի վրա, այդ ժամանակ Հայաստանի հարավային շրջաններում բնակություն էին հաստատել քրդերը, որոնք Սասունի գլխավոր՝ Ամիրյան իշխանության հետ ոտքի կանգնեցին և հայերի հետ միասին պայքարեցին թաթարական հորդանների դեմ<sup>1</sup>:

Հայ և քուրդ ժողովուրդների համատեղ պայքարը Թուրքիայի ու Պարսկաստանի դեմ ավելի է ուժեղանում XVI դարի վերջերին և ավելի սուր

<sup>1</sup> Տե՛ս Հակոբ Եանքալյան, Փիւրդո-հայ պատմություն, 1911, Կ, Պոլիս, էջ 53:

ընույթ է ստանում հասկապես XIX դարում: Երանք այս անգամ հաճախակի են հանդես գալիս միասնական ուժերով:

XVI դարում թուրք բարբարոսները կարողացան սասպատակել Քուրդիստանը. Երանք, իրենց իշխանությունը հաստատելով այնտեղ, սկսում են ամենուրեք հալածել քուրդ աշխատավոր ժողովրդին:

Օսմանական կառավարությունը սկսում է բռնի կերպով մահմեդականացնել քրդերին: Սակայն ոչ բոլոր զեպերում էր այդ նրան հաջողվում: Քուրդ ժողովուրդը պայքարի էր ելնում օսմանյան կառավարության դեմ և չէր ընդունում մահմեդականությունը՝ մնալով զրազաշունք, իսկ քրդերից ոմանք ընդունեցին մահմեդականությունը լսկ այն բանի համար, որպեսզի կարողանան պահպանել իրենց կիսանկախ դրությունը և փրկվել ֆիզիկական քնաշնչումից:

Նույն բռնությունները թուրքերը գործադրում էին հայերի նկատմամբ: Քև Հայաստանը և թև Քուրդիստանը XVI—XVII դարերում թուրքերի և պարսիկների միջև դարձել էին կռվախնձոր: Անընճատ արշավանքները, ժողովրդի ծանր ու անտանելի վիճակը, կոտորածները և, մյուս կողմից, երկրի ներսում ֆեոդալական երկպառակությունները Հայաստանն ու Քուրդիստանը հասցրին քայքայման եզրին:

Օսմանյան կառավարությունը, նկատելով, որ զնալով ամբասպնդվում է այդ երկու ժողովուրդների միջև ստեղծված կապը, և նրանց համատեղ պայքարը հաճախակի սուր ընույթ է կրում, այս անգամ դիմում է մեկ ուրիշ՝ ավելի նեղ մեթոդի, սկսում է թշնամություն սերմանել այդ երկու ժողովուրդների միջև, մեկին հրահրել մյուսի դեմ՝ նա վարում էր՝ «Բաժանիր, որ տիրես» քաղաքականությունը:

Քուրքական կառավարությունը բարի-գրացիական հարաբերությունների մեջ էր քուրդ բեգերի ու շեյխերի հետ, անուղղակի ճանապարհներով նրանց լարում էր ոչ թուրք ժողովուրդների դեմ: Սակայն, շնայած թուրքական կառավարության այս նենդամիտ քաղաքականությանը և արյունարբու գործողություններին, գնալով է՛լ ավելի ամբասպնդվում էր հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը:

Քուրդ ու հայ աշխատավոր ժողովուրդները և նրանց առաջավոր ներկայացուցիչները շատ լավ էին հասկանում թուրքական կառավարության այդ երկերեսանի քաղաքականությունը և իրենց սղատությունը տեսնում էին համատեղ պայքարի մեջ:

XIX դարի սկզբներին հայ և քուրդ ժողովուրդների ազատագրական պայքարն ընդդեմ թուրքական զնապատիզմի գնալով նոր թափ էր

ստանում: Այդ պայմաններում օսմանյան կառավարությունը ամեն կերպ ձգտում էր կասեցնել քրդական շարժումները, աշխատում էր կրկին բորբոքել հայ-քրդական ազգամիջյան կոնֆլիկտները: Նա օգնում և խրախուսում էր բուրգ բեղերին ու շեյխերին, որպեսզի նրանք ուժով գրավեն հայկական հողերը, քրդերին բռնի կերպով բնակեցնեն հայկական հողերի վրա:

Այդ ժամանակ թուրքական կառավարությունն սկսեց հայերին ֆիզիկապես քնաչեչելու կուրս վերցնելու նա միևնույն ժամանակ ձեռքից բաց էր թողնում ոչ մի հարմար առիթ, որպեսզի ոչնչացնի նաև քրդերին: Չէ՞ որ դա նրա վաղեմի նպատակներից մեկն էր, և ահա առիթը պատրաստ էր: 1834 թվականի սկզբներին թուրքիստանում բռնկվում է խռովություն: Մեհմեդ Թեշվիֆաշան սովարաթիվ բանակով մտնում է Քուրդիստան և արյան մեջ խեղդում այդ շարժումը<sup>1</sup>:

1836 թվականին սուլթանական բռնությունների դեմ ոտքի են կելում Տավրոսի և Կուրդուքի լեռնաբնակ քրդերը, որոնց միանում են նաև հայ-

երը: Թուրքական կառավարությունը ապստամբների դեմ հանում է մի մեծ բանակ և արյան մեջ խեղդում այդ շարժումը, որից հետո սրի է բաշում տեղի բնակիչներին շատերին<sup>1</sup>:

Այս դեպքերից հետո թուրքական կառավարությունը ավելի է դաժանանում քրդերի նկատմամբ: Հանձնիս քրդերի և հայերի, նա իր երկրն ենքում տեսնում էր իր տիրապետության համար փտանոց ներկայացնող միացյալ ուժի: Այդ էր պատճառը, որ ամեն մի առիթով ծայր էին առնում հայ-քրդական մասսայական կոտորածները: Բայց ինչպես բուրգ, այնպես էլ հայ աշխատավորները չէին հուսալքվում: Նրանք միշտ միասնական ճակատով պայքարի էին դուրս գալիս թուրքական տիրապետության դեմ, բարձրացնում իրենց համատեղ ազատագրական պայքարի դրոշմ: 1838 թվականին Գիարբեքիբի, Խարազանի, Սասունի և Զղբրեի շրջաններում կրկին սկսվում է բուրգ և հայ ժողովուրդների միացյալ պայքարը ընդդեմ թուրքական տիրապետության: Թուրքական բանակը շարժվում է դեպի այդ շրջանները: Արյունալի կոնֆլիկտ են տեղի ունենում այդ շրջաններում: Թուրք ավազակները այրում, ավե-

<sup>1</sup> Տե՛ս, «Залиски Кавказского отдела императорского русского географического общества», кн. XIX, Тифлис, 1897, стр. 346.

րում են քրդական և հայկական դուռները, սրա-  
խողխող անտառ նույնիսկ անգին բնակիչներին:  
նույն թվականին խորագրանի ամուր բերդերից  
մեկի մաս ճակատամարտ է տեղի ունենում թուր-  
քերի և քրդերի միջև, ուր զլխովին ջախջախվում  
է շորհազարանոց թուրքական զորքը: Սակայն,  
ապստամբների ղեկավար Սաիզ փառչան գավա-  
ղաբար բռնվում է ու սպանվում, իսկ ապստամ-  
բությունը մեղվում է: Այդ ժամանակ էր, որ խորա-  
գանի և Սասունի հայերը օգնություն հասան ՔԶԸ-  
դերին: Դա հայ և բուրդ ժողովուրդների համասեռ  
հերոսական պայքարի գրվագներից մեկն է:

Դրանից հետո քրդական շարժումները ոչ  
միայն չեն դադարում, այլև գնալով ավելի սուր  
բնույթ են ստանում:

XIX դարի երկրորդ կեսին սուլթանական  
թուրքիայում մշակվեց և բնորոշվեց պետական  
հասուկ օրենք՝ հայկական ջարդեր ու կոտորածներ  
կազմակերպելու նպատակով, մի բան, որը խիստ  
զժգոհություն առաջացրեց բուրդ ժողովուրդի մեջ:  
Այս պայմաններում ծագեց ուսու-  
թուրքական պա-  
տերազմը (1853—1856 թթ.):

Այդ ժամանակ քրդական ցեղերի առաջնորդ եղ-  
դանշիրը ամենուր սերում է ապստամբության  
նախապատրաստություն տեսնել: Նա նախա-  
պատրաստական աշխատանքներ էր տանում նաև

հայերի մեջ: Սակայն, շուտով թուրքական կառա-  
վարությունը կոտհում է եղդանշիրի ծրագիրը և  
նրան հետցնում կառավարչի պաշտոնից: Եղ-  
դանշիրը գնում է Զզիրիի մարզի իր հոր կալ-  
վածքը և այնտեղ բնակություն հաստատում: Երբ  
1853 թվականին ակսովում է ուսու-  
թուրքական պա-  
տերազմը, նա անցնում է ակտիվ գործունեության՝  
քրդերից, հայերից և սատրիներից կազմակերպում  
է ապստամբ ջոկատներ: Շուտով ապստամբների  
թիվը հասնում է 30 հազարի:

1855 թվականի հունվարին եղդանշիրը գրա-  
վում է Բիթլիսը և Մուշը, այդտեղերից դուս-  
վանդում թուրքական կառավարիչներին: Այդտեղ  
նրան են միանում տեղի եղզի քրդերը, հայերը  
և սատրիները<sup>1</sup>:

Թուրքական կառավարությունը, տեսնելով,  
որ եղդանշիրի ապստամբությունը զետեղ ծա-  
վարվում է, և բրիտանյա ժողովուրդների հա-  
մակերժեցր նրա նկատմամբ ավելի է ուժեղանում,  
հանձնարարում է Բաղդադի Քենդամ փառաչին՝  
զորքով հարձակվել եղդանշիրի վրա: Սակայն,  
1855 թվականի հունվարին Սերզ քաղաքի մոտ

<sup>1</sup> Տե՛ս. П. И. Аверинин, Курды в войнах России с  
Персией и Турцией в течение XIX столетия, Тифлис,  
1900, стр. 149.

Յուրքական բանակը դիտովին շախշախովում է, և ապստամբները գրավում են Սևրզը, Շախքը, Խորասանը և այլ բազաքներ:

Գրանից հետո զնալով ապստամբների թիվը բազմապատկվում է, և 1855 թվականին եզրանշիրը արդեն ուներ բրդերից, հայերից, ասորիներից ու արաբներից բազկացած մոտ 100-հազարանոց բանակ: Ապստամբությունը ընդգրկում է Բաղդադից մինչև Վան:

Քայց շուտով Անգլիայի միջամտությամբ ապստամբության զեկավարը՝ Եզզանշիրը, ձերբակալվում է, որից հետո ապստամբները դադարեցնում են պայքարը Յուրքական կանոնավոր բանակի դեմ, և ապստամբությունը ճնշվում է:

Պետք է նշել, որ XIX դարի բրդական ազատագրական շարժման մեջ Եզզանշիրը ամենառաջավոր գործիչներից մեկն էր: Նա էր, որ առաջ բաշեց այն դադափարը, թե Յուրքիայի տիրապետության տակ ապրող ազգերը՝ բրդերը, հայերը, ասորիները և արաբները, պետք է միասնական ումերով հանդես գան Յուրքական բռնակալության դեմ՝ հանուն իրենց ազգային անկախության:

<sup>1</sup> Տե՛ս Վ. Ինլիֆեյթյան, Զեյթունի հերոսամարտերը, Երևան, 1960, էջ 27:

1853—1856 թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո օսմանյան կայսրությունը ըսկրսում է աստիճանաբար տնտեսապես քայքայվել, իսկ արևմտյան տերությունները, մասնավորապես Անգլիան, ձգտում էին այդ տիրիթը օգտագործել՝ այդտեղ ամրապնդվելու համար, և սկսվում է փոխառուիթյան հոսքը զեպի թուրքիա: Պարզ է, որ քայքայված երկիրը չէր կարող ժամանակին մարել վերցրած փոխառությունները: Այդ հանգամանքը թուրքիային պցում էր կիսագաղութային վիճակի մեջ:

Ինչպես հայ, այնպես էլ քուրդ, ասորի և մյուս ալլազգիները գտնվում էին անտանելի ճնշման տակ, իսկ մարաբա գյուղացին կիսաճորտ վիճակում էր: Նրանք ամենուրեք շահագործվում ու կեղեքվում էին Յուրքական հարստահարիչների կողմից:

Ահա այդ վերահիշյալ հանգամանքներն են, որ միշտ էլ ստիպել են հայ և քուրդ ժողովուրդներին միասնաբար հանդես գալու թուրքական կառավարության դեմ, է՛լ ավելի ամրապնդելու իրենց միջև եղած բարեկամական կապերը:

Արևմտյան Հայաստանում բարեկամության յավազույն օրինակներից մեկն էլ 1860 թվականին Կարինի հայ և քուրդ քնակչության միասեղելույթն էր թուրքական կեղեքիչների դեմ:

1860 թվականին Ավետիս անունով մի հայ երեսասարդ իր շուրջն է համախմբում մի բանի մարդ և սկսում է շրջել հայ և բուրդ ազգարնակչության մեջ: Ես իր խմբով ադիտացիա էր տանում դուրս գալու թուրքական տիրապետության դեմ: 1867 թվականին Ավետիսը իր ընկերներով լինում է Կարինի շրջանում, ապա անցնում Սասնի լեռները և հանդիպում իր վաղեմի ծանոթ բուրդ Իրոյին, որը թուրք զավթիչների կողմից նետվել էր բանտ ու այնտեղից փախելու Իրոն սրտանց բնջունում է Ավետիսի առաջարկը՝ պայքարելու ազանների և ֆաշիստների դեմ:

1872 թվականին Ավետիսը Կարինում գրադվում է դինագործությունը<sup>2</sup>: 1877 թվականին, երբ ռուսական բանակը մտավ Կարին, Ավետիսը մտերմացավ ռուսական բանակի հրամանատար Լազարևի հետ: Նույն թվականին Կարինում էր գտնվում նաև Գեքսիմի հուշակավոր Շահ-Հուսեյնի որդի Հուսեյն բեգը, որի հետ կապեր ուներ Ավետիսը: Ռուսական բանակի գեներալներ Լորիս-Մելիքովի ու Լազարևի հետ ծանոթություն է հաստատում նաև Հուսեյն բեգը: Նրանց հետա-

<sup>1</sup> Տե՛ս Կորս Մելիք, Կարեն հիշատակին, Վիեննա, 1909, էջ 69:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 71:

բըրբրում էր թուրքական լծից հայ և բուրդ ժողովուրդների ազատագրության հարցը:

Հայ և բուրդ ժողովուրդների միացյալ ուժերի դեմ թուրքական կոռավորությունը միշտ դուրս էր բերում իր կանոնավոր բանակը և արյան մեջ խեղդում նրանց: Սակայն հայ և բուրդ ժողովուրդները շէին վհատվում զրանից: Նրանք պատեհ առիթի դեպքում կրկին ու կրկին ոտքի էին կանգնում և պայքարում իրենց զարավոր ընդամուռ դեմ:

1864 թվականին, երբ թուրքական բանակը փորձում է մտնել Սասուն՝ պետական տուրքեր պարտազրկելու, այնտեղի հայերը և քրդերը հանդես են գալիս միացյալ ուժերով՝ կազմելով մեկ ընդհանուր ճակատ ընդդեմ թուրքական բանակի: Սկսվում են հայ և բուրդ ժողովուրդների հերոսամարտերը, և նրանք Բաթմանի կամուրջի մոտ պարտություն են մատնում թուրքական բանակին:

Այս ճակատամարտից հետո թուրքական բանակը ետ է քաշվում և մոտ քսան տարի այլևս Սասունի վրա հարձակվելու փորձ չի անում: Այդ

<sup>1</sup> Տե՛ս Վ. Մելիքեյան, Զննարկ հերոսամարտերը, Երևան, 1960, էջ 80:



տարիներին Սասունի հայերն ու բրդերը ոչ մի հարկ չէին վճարում Թուրքական կառավարությանը:

Հալ և բուրդ ժողովուրդների բարեկամության պատմության մեջ փառավոր էջ է Շեյխ Իրազուլայի շարժումը. նա հայ և բուրդ ժողովուրդներին կուլ արեց՝ միացյալ ուժերով հանդես գալ Թուրքական բռնակալության դեմ: Ինչպես բուրդ, այնպես էլ հայ աշխատավորությունը սիրով արձագանքեց Շեյխ Իրազուլայի կոչին:

Եվ երբ 1880 թվականին սկսվեց Շեյխ Իրազուլայի շարժումը, նրան միացան հարյուրավոր հայեր: Ճիշտ է, սկզբնական շրջանում Շեյխ Իրազուլան խաբվեց Թուրքական կառավարության կեղծ խոստաններից, սակայն շուտով նա զգաց իր սխալը և Քուրբիայի դեմ հաղթանակի միակ ուժը տեսավ հայ-բրդական միացյալ ճակատի մեջ և մեծ գործ կատարեց այդ ճակատն ամբապնդելու ուղղությամբ:

Ահա ինչ է ասում նրա մասին Առն Տիգրանյանը «Մշակ» թերթում ապագրված իր հոդվածում. «Շեյխ Իրազուլան վերադառնալով իր երկիրը (Պարսկաստանից— Կ. Չ.) իջնանել էր սուրբ Բարդուղիմեոսի վանքում: Մինչև այս վանքը հասնելը նրան տրամադրել էին մոտ երեք հազար բուրդ ձիավորներ, և այդ բազմության հետ

Շեյխը մտել էր վանք, վանահայրը ընդունել էր նրան սիրով: Շեյխը գնալու ժամանակ բոլոր բրդերին հրամայել էր, որ հայերին պետք է իրենց կորսյրները համարեն և երբեք չեն զացնեն»<sup>1</sup>:

1880 թվականի հուլիսի վերջերին Շամիզում Շեյխ Իրազուլան հրավիրում է բրդական շեյխերի համադումար, ուր պետք է մշակվեր բրդական սյուլայիս կանոնադրությունը: Համադումարում սուր վեճ է սկսվում Իրազուլայի և Թուրքական կառավարության կողմից կաշառված մի քանի հոգևորականների միջև՝ հայերի և Քուրբիայում բնակվող մյուս քրիստոնյա ժողովուրդների նրկատամար ունենալիք վերաբերմունքի հարցի շուրջ: Որպեսզի շեղեն Իրազուլայի և նրա կողմնակիցների ուշադրությունը քրդերի ազատագրման հարցից, հոգևորականության կաշառված մասը, Թուրքական կառավարության թելադրանքով, առաջարկում է աջակցել հայերի և քրիստոնյա այլ ժողովուրդների ընդհանուր կոտորածին: Շեյխ Իրազուլան վճռականորեն մերժում է այդ առաջարկը: Նա ասում է. «Եթե մինչև հիմա Բ. Գուսն կառավարությունը ամեն կերպ պաշտպանում է քրդերին, դա արվում է այն նպատա-

<sup>1</sup> «Մշակ», № 229, 1882:

կով, որպեսզի մեզ հակադրեն քրիստոնեական տարրերին Անատոլիայում, և եթե հայերը այսօր տեղ ոչնչացվին, ապա այն ժամանակ քրդերը կփորցնեն իրենց նշանակութունը թուրքական կառավարության աչքում...»<sup>1</sup>

Այս համազումարից հետո Շեյխ Իրադուլան գիմում է գործնական քայլերի՝ հայ-քրդական միացյալ ուժով անցնում է թուրք-պարսկական սահմանը։ Նրա հետ միասին, 55 հազար ապստամբներով ոտքի էր կանգնել նաև նրա որդին՝ Շեյխ Աբդուլ Ղադրին։ Ինքը՝ Շեյխ Իրադուլան, իր արամազորության տակ ուներ 40 հազար մարդ։ Ապստամբությունը հաջողությամբ առաջ է ընթանում, նրանք գրավում են Մեխարեղին, Մարագաբաղարենիքը և մտանում Քավրիդին։ Սակայն, այստեղ մասնավելով անհաջողություն, նրանք նորից վերադառնում են թուրքիա և շարունակում խռովությունը<sup>2</sup>։

Շուտով թուրքական և պարսկական կառավարությունները համաձայնության են գալիս և միացյալ ուժերով անշուտ այդ շարժումը։ Շեյխ Իրադուլան թուրքական կառավարության կողմից բանտարկվում և ապա արտրվում է Մեքքե, ուր և մահանում է։

<sup>1</sup> П. Н. Авериев, стр. 228.

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 235.

Շեյխ Իրադուլայի ապստամբությունից հետո հայ-քրդական միացյալ շարժումը ավելի լայն թափ է ստանում<sup>3</sup>։

Բազմաթիվ աղբյուրներ վկայում են, որ միայն սուսըին համաշխարհային պատերազմի ժամանակ քրդերը փրկել են մոտ 200 հազար հայի կյանք<sup>4</sup>։ Սասունի շրջանում համաշխարհային պատերազմի ժամանակ մոտ 12 հազար հայեր սպաստան են գտել քրդերի մոտ։ Քուրդ զվարշները, որոնք ապրում էին լեռներում, էրզրումի հարթավայրից ղեկի հարավ-արևմուտք, Մամախասթուն-Արարկիր-Խարբերդ քաղաքների միջև, ամենուր հովանավորում էին հայերին։ Էրզրումի հարթավայրում զվարշ քրդերը իրենց անխաշելի լեռներում թաքցրել են Միջագետք արտրվող հարյուրավոր հայ ընտանիքներ<sup>5</sup>։

Այդ նույ՝ ժամանակ Մարզինիայից հարավ-արևելք Սենջարի արևրում քրդերը հովանավորել են 5 000—6 000 փախստական հայերի և փրկել նրանց կյանքը։ Գեռ ավելին, քրդերը այդ հայերի հետ միասին ղենքով պայքարել են թշնամու ղեմ<sup>6</sup>։

<sup>1</sup> Տե՛ս В. А. Гордилевский, Избранные сочинения, том III, Москва, 1962, стр. 123.

<sup>2</sup> Տե՛ս «Армянский вестник», № 33, 1916, стр. 16.

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, № 29—30, 1917, էջ 15.

Արխիվային փաստաթղթերից մեկում ասվում է, որ այն հայ ընտանիքները, որոնք ապաստան էին գտել բրզական Քոչկի և Միրազի գյուղերում, ազատվել են թալանից, կոտորածից քրդերի շնորհիվ<sup>1</sup>։

Պատերազմի մասնակի քրդերի կողմից հայերին ցույց տրված օգնության ամենալավ փայտովունը հայերի այն նամակն է, որն ուղարկվել էր Բիբլիսում գտնվող ռուսական հրամանատարությանը։ Այդ նամակը գրվել է 1916 թվականի ապրիլի 12-ին։ Այնտեղ ասված է. «Մենք՝ ներքոհիշյալ սատարողներս, ազատվելով կրակից և կոտորածից, արդեն տասնմեկ ամիս է, ինչ գտնվում ենք լեռներում աշիրաթների (քրդական ցեղերի) մոտ... Այն բանի համար, որ մենք մինչև օրս կենդանի ենք մնացել, պարտական ենք այդ քրդերին, որոնք ոչ մի զոժվարության առջև կանգ չեն առնում, որպեսզի փրկեն մեզ Իրոք, նրբ թուրքական կառավարությունը խմացավ մեր փախուստի մասին, նա իր ոստիկանությունը ն զապրեկներին ուղարկեց բրզական «աղաների» մոտ, որպեսզի կա՛մ մեզ սպանեն, կա՛մ հանձնեն իրենց։ «Աղաները» հրաժարվեցին։ Այդ բանից հետո մոլլաներին և շլյախերին ուղարկեցին նրանց մոտ, որոնք զուրանի հիման վրա մեզ

պաշտպանողներին համառում էին, որպեսզի մեզ սպանեն, բայց նրանք էլ չհասան որևիցե հաջողության»։ Այնուհետև. «Թուրքական կառավարությունը զորք ուղարկեց ընդդեմ քրդերի, բայց քրդերը հայերի հետ մեկտեղ հարված հասցրեցին ինչամոն։ Քրդերը և հայերը, շրջապատված լինելով թուրքական զորքի կողմից, կտրվել են արտաքին աշխարհից, բոլոր պաշարները վերջացել են, քրդերը հայերին կերակրում են իրենց հաշվին, այդ նպատակով վաճառել են իրենց բոլոր ունեցվածքը, և նրանք էլ այնպիսի ծանր, աղբառ վիճակի մեջ էին, ինչպես հայերը։ Հայերը խնդրում են, որ ռուսական բանակը գրավի Բիբլիսը և զա նրանց օգնությանը։ Նամակի վերջում բերված է այն հայ ընտանիքների ցուցակը, որոնք փրկվել են քրդերի շնորհիվ։ Այսպես, օրինակ, քրդերը փրկել են 60 ընտանիք Գարկյու գյուղից, 50՝ Սելենդից, 55՝ Զեբզոյից, 30՝ Ավրերից, 100 ընտանիքից ավելի՝ Խարկ, Գրուտ և Ղզու ման գյուղերից և 45 ընտանիք՝ Գուսոցեղի գյուղից։ Քացի սրանցից, Խացո գյուղից 400 ընտանիք ապաստան են գտել քրդական Ասսի բնակավայրում<sup>2</sup>։

Իսկ Գերաիմի շրջանի հայերը շարդից ազատ-

<sup>1</sup> ЦГИА, Груз. ССР, д. 3196, л. 80.

<sup>2</sup> Տճ՝ «**Արի Բարբի**, В стране ужаса, мученица армяя, Тифлис, 1919, стр. 54—57.

վեցին միայն քրդերի օգնությամբ. վերջիններս  
զենք վերցրին և պաշտպանեցին հայերին: «Պատ-  
մութիւն Չարսանճակի հայոց» գրքի հեղինակ  
Երևանյանը գրում է. «1916—20 թթ., երբ թուր-  
քական կառավարութիւնը մասսայականորեն  
կազմակերպում էր հայկական շարքեր, այդ ժա-  
մանակ 20 հազար հայեր ապստան գտան քրդ-  
երի մոտ և բնակութիւն հաստատեցին քրդա-  
կան գյուղերում»<sup>1</sup>:

Գերսիմցի քրդերը, թաքցնելով հայերին, մին-  
նույն ժամանակ հերոսական մարտեր էին մղում  
թուրքական զորքերի դեմ: 1916 թվականի մար-  
տի 30-ին նրանց ջոկատները հասան մինչև Խար-  
բերգ<sup>2</sup>:

Այդ ժամանակ Գերսիմի քուրդ ապստամբնե-  
րը կապ էին պահպանում սուսական բանակի  
հետ, միասնական ուժով պայքարում թուրքական  
զորքի դեմ: Քրդական ապստամբ զնդերից մեկի  
ղեկավար Գերսիմցի Մուստաֆա Վեֆանը Երզըն-  
կայի ճակատամարտում իր ջոկատով անցավ  
սուսական բանակի կողմը<sup>3</sup>:

<sup>1</sup> Գ. Ս. Երևանյան, Պատմութիւն Չարսանճակի հայոց,  
1956, Թեյրութ, էջ 65:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>3</sup> Տե՛ս E. K. Sarkisyan, Экспансионистская полити-  
ка османской империи в Закавказье, Ереван, 1962,  
стр. 258.

Ռուսական բանակին և հայերին՝ Գերսիմի  
քրդերի հասցրած օգնության մասին վկայում է  
ևսեւ դոկտոր Նուրի Գերսիմին: Նա ասում է, որ  
պատերազմի ժամանակ Երզնեկայի քրդերը ոտքի  
էին կանգնել ու պայքարում էին թուրքական բա-  
նակի դեմ և մի շարք շրջաններում նույնիսկ ինք-  
նուրույնութիւն էին ձեռք բերել, ամենուր օգ-  
նում էին ռուսական բանակին ու հայերին<sup>1</sup>:

Այսպիսով, վերը բերված փաստերը մեկ ան-  
գամ ևս վկայում են հայ և քուրդ աշխատավոր  
ժողովուրդների բարեկամական կապերի մասին,  
նրանց համագործակցության և բնդհանուր թըշ-  
նամու դեմ համատեղ պայքարի մասին:

<sup>1</sup> Տե՛ս N. Dersimi, Kurdistan tarihinde Dersim,  
Halep, 1952, s. 13.

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԳԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ  
ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՀԵՏ

Մի կողմից՝ անուսական ժամեր պայմանները, իսկ մյուս կողմից՝ ֆիզիկական բնաջնջման վըտանգը պատճառ էին հանդիսանում, որ թուրքիայի և Պարսկաստանի տիրապետության տակ գանձող բուրգ ժողովուրդը ոտքի կանգնի և իր բողոքի ձայնը բարձրացնի: Սակայն տարերային բնույթ կրող այդ շարժումները ճնշվում էին թուրքական ու պարսկական կազմակերպված բանակների կողմից: Այլևս շկարզանաբով տանել թուրքական ու պարսկական լուծը, բուրգ աշխատավորների մի մասը թողնում էր իր բնակավայրը և գաղթում արիշ երկրներ:

Քրդերի գաղթը զեպի Արևելյան Հայաստան հիմնականում սկսվում է XIX դարի սկզբներից 1806—1812 թվականների սուս-թուրքական և սուս-պարսկական պատերազմների ժամանակ ու զրա-

նից հետո քրդական բազմաթիվ ջեղեր թուրքիայից և Իրանից գաղթեցին Ադրբեջան և Հայաստան<sup>1</sup>:

Պետք է նշել, որ այդ պատերազմների ժամանակ քրդերը միշտ հակում են ունեցել զեպի սուսները, հաճախակի դիմել են սուսական հրամանատարությանը՝ Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու համար: Այսպես, օրինակ, 1807 թվականին պարսկաստանցի բուրգ Մահմեդ Սեֆի Սուլթանը, որը իր արամադրության տակ ուներ 500—600 քրդական բնաանիթ, թույլարվում է խնդրում սուսական զորագնդի հրամանատար զնդապետ Կոտլարեսկույց, որպեսզի իր մարդկանցով անցնի սուսների տիրապետության տակ<sup>2</sup>:

Այնուհետև, 1810 թվականին, պարսիկների հարձակումներից և հարստահարություններից ազատվելու համար Պարսկաստանից մոտ 140 բուրգ բնաանիթ գաղթում են զեպի Ռուսաստան:

Քրդական բազմաթիվ բնաանիթներ նույն թվականներին գալիս են Երևանի նահանգ, ապաստանում իրենց հայ և բուրգ բարեկամներին մաս<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Тифлисский листок», № 100, 1905, стр. 2.

<sup>2</sup> Տե՛ս АКАК, т. III, стр. 443 (Акты, собранные и изданные Кавказской археологической комиссией).

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը:

Քրդերի գաղթը Քուրքիայից և Պարսկաստանից դեպի Ռուսաստան լայն թափ է ստանում Գյուլիստանի հաշտութիւնից հետո: Այդ ժամանակ Անգլիան Պարսկաստանին զրդում էր վերանայել Գյուլիստանի պայմանադիրը և նոր պատերազմի միջոցով նվաճել ամբողջ Անգրկովկասը: Այդ պայմաններում սրբում են Պարսկաստանի և Ռուսաստանի փոխհարաբերությունները, որը և հասցրեց նոր պատերազմի, որը սկսվեց 1826 թվականի հունիսին:

Այս պատերազմում հաղթանակով դուրս եկավ Ռուսաստանը, և 1828 թվականի փետրվարի 10/22-ին Քուրքմենչայում Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կնքվեց հաշտութիւն պայմանագիր: Քուրքմենչայի պայմանագրով վերջնականապես ավարտվեց Արեւելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին:

Ըստ այդ պայմանագրի, պարսկական կառավարութիւնը պարտավորվեց շարդելիչ նրանց՝ ովքեր կցանկանային մշտական բնակութիւն հաստատելու համար Պարսկաստանից փոխազդրվել Ռուսաստան: Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո տասնյակ հազարավոր հայեր և բրդեր Պարսկաստանից ու Քուրքիայից գաղթեցին Արեւելյան Հայաստան: Քուրք ժողովուրդը բարեկամական ամուր կապերով կապված էր հայ ժողովրդի հետ, որի պատճառով

էլ հենց հայ ժողովրդի հետ մեկտեղ քրդերը սկսեցին գաղթել Անգրկովկաս:

Հետագայում բուզմաթիվ քրդական բնուանիքներ դեպի Արեւելյան Հայաստան գաղթեցին 1828—29 թվականների առաջնորդական պատերազմից հետո: Արաբա, օրինակ, այժմյան Քալինի շրջանի Քալաշբեկ, Բարոժ, Ղրղթափա, Բողթլի, Ղանաղարջի, Դիանի, Գյալթոյի գյուղերի քրդերը գաղթել են Քուրքիայից 1804—1813, 1826—1828—1829 թվականների առաջնորդական և առաջնորդական պատերազմներից հետո<sup>1</sup>:

1829 թվականին Պարսկաստանից Երևանի նահանգն են գաղթում մոտ 30 քրդական բնուանիքներ և բնակութիւն հաստատում Դավալու գյուղում<sup>2</sup>:

Հայ և քուրք ժողովուրդները, Քուրքիայից և Պարսկաստանից գաղթելով դեպի Ռուսաստան, դեպի Արեւելյան Հայաստան, աղատվում են թուրք-պարսկական ռազմա-ֆեոդալական տիրապետութիւն ծանր լծից: Հաստատվելով քաղաքական, սոսոսական և կուլտուրական տեսակետից անհամեմատ ավելի զարգացած երկրում, հայ և քուրք ժողովուրդների կյանքը զրգեց պատմական նոր ուղու վրա:

<sup>1</sup> Տե՛ս Օ. Փ. Արիտովա, Поездки к курдам Закавказья, «Советская этнография», № 6, 1958, стр. 137.  
<sup>2</sup> ՀՍՍՖ ԿՊՍ, ֆոնդ 100, ց 1, գ. 98, էջ 2.

Սակայն միշտ չէ, որ Թուրքական կառավարությունը և տեղական բուրձր բեզերը թույլ էին տալիս քրդերին զաղթելու դեպի ուսական հողը: Գրա համար միշտ պայքարում էր բուրձր աշխատավոր ժողովուրդը և կազմակերպում գաղտնի զաղթներ դեպի Ռուսաստան<sup>1</sup>:

1832 թվականին Ռեանդուզի կղզի-բրդերը ուրի են եղնում և պայքարում Ռեանդուզի Թուրքական փաշայի դեմ: Վերջինս զինված բանակով հարձակվում է նրանց վրա և մեծ մասին բնաջնդում, իսկ մնացած մասը սրվում է կրկրի լեռնային տարբեր շրջանները, մի մասը բնակություն հաստատում Սինդարի սարում, իսկ մնացած մասը անցնում Ռուսաստան<sup>2</sup>:

Պետք է ասել, որ որոշ պատմաբաններ, հատկապես բուրձուս-նացիոնալիստական պատմաբանները, ժխտում են բուրձր ժողովրդի ուսական օրինեռացիան: Նրանք պնդում են, որ իրր քրդերը հակում չեն ունեցել դեպի ուսաները և չեն ձգտել զաղթելու դեպի Ռուսաստան: Գծվար չէ պատմական բազմաթիվ փաստերով հերքել այդ տեսակետը և ապացուցել, որ բուրձր ժողովուրդը միշտ էլ հակված է եղել դեպի ուս ժողովուրդը: Մենք վերևում բերեցինք շատ փաստեր և տե-

սանք, թե ինչպես սուլթանական թուրքիսն ամենուրեք շահագործում, ճնշում և Ֆիզիկական բնաջնդման էր ենթարկում քրդերին: Հետևաբար, բուրձր ժողովուրդը չէր կարող ատելություն մը լըցվել Թուրքիայի դեմ և չձգտել մի այնպիսի պետության ու շրջունել նրա հովանավորությունը, ինչպիսին էր Ռուսաստանը, որը Թուրքիայի և Պարսկաստանի համեմատությամբ տնտեսապես, քաղաքականապես ու կուլտուրապես առավել զարգացած երկիր էր: Եվ վերջապես, նրանք դադարում էին մի այնպիսի երկիր, ուր չկային Թուրքական ու պարսկական արյունարբու խաներն ու բեզերը, որոնք Ֆիզիկական բնաջնդման էին ենթարկում այլազգիներին:

Ահա ինչ է ասում հայ աշխարհաբար լեզվի հիմնադիր, մեծ լուսավորիչ Խ. Աբովյանը 1840 թվականին քրդերի մասին գրած իր հոդվածում. «նեղված ու զլատված լինելով Թուրք կառավարության կողմից, նրանք (քրդերը— Կ. Չ.) սակայն չեն թաքցնում իրենց ատելությունը Թուրքիի հանդեպ և նվիրվածությունը ուսաների հանդեպ»<sup>3</sup>:

Իսկ հայ մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանը պատերազմի մասին իր հուշերում գրում է.

<sup>1</sup> Տե՛ս ԴՄ, N 100, 1905,

<sup>2</sup> Տե՛ս «Մշակ» N 84, 1897,

<sup>3</sup> Խ. Աբովյան, նրբերի լիակատար ժողովածու, հատ. 8, Երևան, էջ 378:

«Համաշխարհային պատերազմի ժամանակ ԲՐԻ-  
գերը ամեն կերպ օգնում էին ուսական բանա-  
կին թե՛՝ ուղղմապես և թե՛ անտեսապես, ուսա-  
կան բանակում կային քրդական զինված ջո-  
կատներ»<sup>1</sup>:

Ռուս-թուրքական բոլոր պատերազմների ժա-  
մանակ հույների, սերբերի, հայերի հետ մեկտեղ  
քրդերը ևս ոտքի են կանգնել և պայքարել սուլ-  
թանական պետության դեմ, օգնել ուսաներին:  
Այդ ժողովուրդների ազդային-ազատագրական  
պայքարի կողմն է եղել ռուս ժողովուրդը և նրա  
բոլոր առաջավոր մտածողների ջերմ ու անկեղծ  
համակրանքը:

Ինչպես նշեցինք, բուրդ ժողովրդի հակումը  
դեպի Ռուսաստան և նրանց գաղթը դեպի Արևել-  
յան Հայաստան հատկապես ցայտուն կերպով  
երևաց ռուս-թուրքական և ռուս-պարսկական  
պատերազմների ժամանակ: Այդ հարցն ալվիի  
հանգամանորին պարզարանելու համար հարկ ենք  
համարում անդրադառնալ ռուս-քրդական հա-  
րարերությունների մի քանի հարցերի:

1804—1813 թվականների ռուս-պարսկական  
պատերազմի ժամանակ Երևանի նահանգում կար  
մտտ 8 հազար քրդական ընտանիք: Ռուսական

կովկասյան բանակի հրամանատար զենեբուլ Յի-  
ցիանովը, տեսնելով, որ քրդերը կարող են օգ-  
նություն ցույց տալ ռուսական բանակին, նամա-  
կազրական կապ է հաստատում քրդական ցեղա-  
պետ Հուսեյն աղայի հետ: Հուսեյն աղան  
հարգանքով է վերաբերվում ռուսական բանակի  
հրամանատարի նամակներին, խոստանում է  
Պարսկաստանի կողմից շմասնակցել պատերազ-  
մին և այլն<sup>1</sup>:

Այնուհետև, 1809—1812 թվականներին, կով-  
կասյան բանակի հրամանատարներ Տորմոսովը  
և Ռոբիշչեր կապ են պահպանել Երևանի քրդական  
ցեղապետների հետ: Վերջիններս, հարգելով ռու-  
սական հրամանատարության պահանջները, հրա-  
ժարվել են մասնակցել պատերազմին<sup>2</sup>:

Երբ սկսվում է 1828—1829 թվականների ռուս-  
թուրքական պատերազմը, Սուլեյմանիեի քրդերի  
ցեղապետ Իբրահիմ աղան դիմում է գեղապետ  
Լազարեին և թույլտվություն խնդրում, որպեսզի  
հայ գաղթականների հետ մեկտեղ իրենց էլ թույ-  
լատրվի ընդունելու Ռուսաստանի հպատակու-  
թյունը: Հենց այդ ժամանակ էլ պարսկական  
քրդերից շատերը դիմում են Կոմս Պասկևիչին,

<sup>1</sup> ՀՄԹՍ գրականության և արվեստի թանգարան, Հովհ.  
Բումանյանի ֆոնդ, գ. 257, էջ 1—2:

<sup>1</sup> Տե՛ս Ս. И. Аверьянов, стр. 14.

<sup>2</sup> Տե՛ս նույն աղբյուր, էջ 21:



որպեսզի միացյալ ուժերով հանդես գան թուրքայի դեմ<sup>1</sup>;

Իսկ 1827 թվականի Հուլիս ամսին, երբ Գրիբոյնդովը այցելում է պարսկական բանակի հրամանատար Աբաս-Միրզայի ճամբարը և գրույց ունենում նրա հետ, այնտեղ գտնվող քրդերը դիմում են Գրիբոյնդովին և խնդրում, որ նա միջնորդի ռուսական հրամանատարության առաջ՝ իրենց ընդունելու Ռուսաստանի Հովանու տակ<sup>2</sup>:

Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ քրդերի մեծամասնությունը շարձագանքեց թուրքական կառավարության գորահավաքին, նրանցից շատերը, այդ թվում նաև ցեղապետ էմիր Հեքյարը, իրենց հայտարարեցին շեղոք, ամբողջ հարավային Քուրդիստանը շմասնակցեց պատերազմին: Իսկ ռուսահպատակ քրդերը հայերի հետ միասին մինչև վերջը հավատարիմ մնացին Ռուսաստանին և ազնվորեն ծառայեցին ռուսական բանակում<sup>3</sup>:

1829 թվականին ռուս-թուրքական պատերազմը ավարտվել էր, բայց այդ մասին դեռ անտեղյակ էին հարավային Քուրդիստանում: Ուստի Միրզա աղան, Դիարբեքիրի եզդիների ցեղապետը, իր

ներկայացուցիչ Պետրոս Ղազարովին ուղարկում է Պասկելիչի մոտ: Պետրոս Ղազարովը կոմս Պասկելիչին գտնում է Քիֆլիսում և նրան է հանձնում բուրդ ցեղապետի նամակը: Ահա նա ինչ է գրում Պասկելիչին. «Ե՛րբ դուք գեռ էրգրումսմ է՛իք, ես ձեզ մտա է՛ի ուղարկել իմ ներկայացուցչին և առաջարկել, որ 1500 հեծյուններով և 5 հազար հետևակով միանամ ռուսական բանակին, եթե ռուսական բանակը էրգրումից շարժվի Բիթլիս, իսկ այժմ ես նորից պատրաստ եմ օգնելու Ձեզս»:

Քրդերի հակումը դեպի ռուս ժողովուրդը և նրանց զաղթը դեպի Ռուսաստան ցայտուն կերպով երևան եկան նաև 1853—1856 թվականների ռուս-թուրքական պատերազմի ժամանակ: Նրանք ռուսների հաղթանակի մեջ էին տեսնում իրենց ազատությունը: Եվ պատահական չէր, որ երբ սկսվեց պատերազմը, քրդերը մասսայականորեն հրամարվեցին կատարելու թուրքական հրամանատարության կարգադրություններն ու շմասնակցեցին պատերազմին:

Այս պատերազմի ժամանակ ևս քրդերը կապ էին պահպանում ռուսական բանակի հրամանատարության հետ և պատրաստակամություն հայտնում ամեն մի հնարավորության դեպքում օգնել ռուսական բանակին:

<sup>1</sup> Տե՛ս АКАК, том VII, стр. 629.

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 559.

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 171:

<sup>1</sup> Տե՛ս П. И. Аверьянов, стр. 76.

Գեներալ Լեխտոսինը, որը Ղրիմի պատերազմի ժամանակ ավելի մտախիչք էր շփվել քրդերի հետ, ասում է, որ թուրքական կառավարությունը զանազան պարզենների և այլ միջոցներով իր կողմն էր թեքել քրդական վերնախավի մի մասին, իսկ ժողովուրդը, որը կրում էր հարկերի ամբողջ ծանրությունը, հակված էր դեպի սուսները<sup>1</sup>:

Հենց պատերազմի առաջին տարում Քուրքիայից Ջալալի քրդական ցեղի բազմաթիվ բնտանիքները գաղթեցին դեպի Երևանի նահանգը<sup>2</sup>:

1854 թվականի մարտ ամսին Լորիս-Մելիքովը Ղրղըլ-Քիլիսայում (Կարսի մոտ) հանդիպում է ունեցել Զիլանի քուրդ ցեղապետ Ահմադ աղայի հետ, իսկ եռյամբերի սկզբին՝ Կարսի փառալուծյան քրդերի ցեղապետ Ղասրմ խանի հետ: Վերջին հանդիպման ժամանակ Ղասրմ խանը պարտավորվում է հրաժարվել թուրքական հպատակությունից, զուրս գալ նրա դեմ, կազմել 800—1000 հոգուց քրդական հեծյալ մի չոկատ և լրիվ խաղաղություն պահպանել սուսական սահմաններում<sup>3</sup>:

Ռուսական բանակի հետ թուրքերի դեմ կրվում էին քրդական և հայկական կամավորական

չոկատները, որոնց դեկավարում էր գնդապետ Խրեչոստացիին:

Պատերազմի տարիներին քրդերը ամենուրեք լքում էին թուրքական բանակի շարքերը և գալիս էին սուսական բանակը: Գնդապետ Խրեչոստացիին 1855 թվականի օգոստոսի 31-ին Մանազկերտում եղած ժամանակ հանդիպում է ունենում քրդերի հետ, վերջիններս նրան հայանում են, որ իրենք տահնուբյամբ են ծառայում թուրքական բանակում և ցանկանում են խաղաղ ապրել սուսների հետ, բայց թուրքական հրամանատարությունը բռնի ուժով ստիպում է իրենց ծառայել բանակում:

1855 թվականի մարտ ամսին Մուրադյովը կառավարությանն ուղղված իր դեկուցագրում նշում է, որ Քուրքիայից Ռուսաստան է գաղթել 1200 քուրդ բնտանիք<sup>4</sup>:

1855 թվականի փետրվարի 27-ին Լորիս-Մելիքովը մի նամակ է ուղարկում թուրքական սահմանում գործող կովկասյան կորպուսի հրամանատարին, ուր գրում է. «Քրդական Ջամադի ցեղից 60 քուրդ բնտանիք անցել են մեր կողմը: Մի խոսքով Ղրղըլ-Քիլիսայում և Հաչի-Քայրա-մում մեր զորքի երևալը լավ ազդեցություն է թողնում քրդերի վրա, հուսով եմ՝ սահմանից այն

<sup>1</sup> Տե՛ս П. И. Аверянов, стр. 83.

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 171.

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 255.

1 Տե՛ս АКАК, том X, стр. 478.

կողմ ապրող բրդերը (Քուրքիայի բրդերը— Կ. Չ.) կամավոր կերպով կանցնեն մեր կողմը<sup>1</sup>։ Եվ իրոք, կարճ ժամանակից հետո, 1855 թվականին, էրզրումի մոտ 1 500 բրդեր թողնում են թուրքական բանակը և անցնում, միանում առևանգան բանակին<sup>2</sup>։ Այդ նույն թվականին բազմաթիվ հայեր ու բրդեր Քուրքիայի կենտրոնական շրջաններից գաղթում են Ղարս, որտեղից հեշտությամբ անցնում են Ռուսաստան։

Քրդերի հակումը զեպի առա ժողովուրդը որոշակի կերպով երևում է նաև ասորիների պատերիարք Աբրահամի (Մարշիմոնի) նամակից, որ նա 1855 թվականի մարտի 15-ին ուղարկում է առևանգան բանակի հրամանատար իշխան Բերուտովին։ Ահա ինչ է ասված այնտեղ. «...Մուշպես հայերը, այնպես էլ բրդերը սպասում են առևանգան բանակի երևալուն մեր սահմանին, որպեսզի միանան նրան։ Իշխան Բերուտով, ճիշտ է, մենք հեռու ենք ապրում ձեզանից, բայց մեր սիրտը շատ մոտ է ձեզ, որովհետև մենք հավատում ենք բրիտանոնյականներին»<sup>3</sup>։

Իսկ Ախախի նախկին բնակիչ Մարտիրոսը Ազրերջանի Լպիկոպոս Բաճակ Սաթունյանցին

<sup>1</sup> Н. Н. Муравьев, Война за Кавказом в 1855 г., том I, стр. 223, Петербург.

<sup>2</sup> Տե՛ս ԱԿԱԿ, том X, стр. 478.

<sup>3</sup> Տե՛ս ԱԿԱԿ, том X, стр. 350.

1855 թվականի հոկտեմբերի 25-ին գրում է, «Ախախի բուրդ և հայ բնակիչները գտնվում են աղքատության մեջ։ Եթե այսպես շարունակվի, գարնանը հայերը կցրվեն տարբեր ծայրամասեր։ Պետք է հայտնեմ, որ Հակարիայի բոլոր հայ և բուրդ բնակչությունը հարգում է իմ խոսքը։ Մեղ լուրեր են հասնում, որ առանձերը, փառք աստծո, ամենուր հաղթանակ են ձեռք բերում։ Խնդրում եմ Ձեզ, եթե կարող եք, հայտնել առևանգան զեպանությունը, եթե այստեղ ուղարկվի շոքո հար մարդուց բաղկացած զորք, ապա ոչ ոք չի կարող նրանց դիմադրել և նրանց կարող եմ միացնել 50 հազար կամավորականներ։ Ապա այդ ուժը կշարժվի զեպի Մուսուլի փաշայությունը, ես կգրավեմ Վանը, Բիթլիսը, Մուշը և կհանձնեմ նրանց տիրապետությունը»<sup>1</sup>։

Պատմական աղբյուրները հաղորդում են, որ միայն 1853—1856 թթ. պատերազմի ժաճանակ մոտ 3 000 բուրդ բնտանիք Քուրքիայից գաղթել են Ռուսաստան, որոնց հիմնական մասը բնակություն է հաստատել Արևելյան Հայաստանում՝ այժմյան Ապարանի, Քալինի, Վեղու, Հոկտեմբերյանի և Արտաշատի շրջաններում։

Ինչպես տեսնում ենք, XIX դարի առա-թուրական բոլոր պատերազմների տարիներին, զոր-

<sup>1</sup> ԱԿԱԿ, том X, стр. 479.

զերբ միշտ էլ լավ են տրամադրված եղել ռուսների նկատմամբ, ամենուրեք օգնել են նրանց: Սակայն ցարական Ռուսաստանը չկարողացավ օգտագործել բրդերի հակաթուրքական տրամադրությունները:

Քուրդ ժողովրդի Ռուսաստանի և ռուս ժողովրդի նկատմամբ ունեցած համակրանքի մասին են վկայում նաև Սոուչ-Քուլախի ռուսական հյուպատոս Ա. Ս. Իյասի հայտարարությունները: 1905—1912 թվականներին թուրք-պարսկական սահմանազլիում թուրքական խմբերի ելույթները անհավասարեցնում էին ռուսական կառավարությանը: Այդ իսկ պատճառով ռուսական կառավարությունը որոշում է Պարսկաստանի արևմտարում, Սոուչ-Քուլախ քաղաքում, հիմնել ռուսական հյուպատոսություն, և հյուպատոս է նշանակվում Ա. Ս. Իյասին, որը քրդերեն խոսում էր: 1912 թվականին Իյասին մեկնում է Սոուչ-Քուլախ, որտեղ, ինչպես ինքն է պատմում, մեծ ընդունելություն է դառնում քրդերի կողմից: «...չկար մի քրդական ցեղապետ, որը մի փոքր հարց լուծելու ղեկավարում ինձանից խորհուրդ չվերցնենք»<sup>1</sup>, — ասում է Իյասին:

Իսկ ռուսական արտաքին գործերի մինիստրու-

թյան աշխատող Վ. Մ-ն, 1914 թվականին լինելով Սոուչ-Քուլախում և շրջելով քրդերի մեջ, իր հիացմունքն է հայտնում այդ ժողովրդի մոտ իր պատած ջերմ ընդունելության համար: Նա ասում է. «...1914 թ. ինձ հաջողվեց լինել Քուրդիստանում (պարսկական — Կ. Չ.), և նա պետք է խոստովանեմ, որ այդտեղ ինչպիսի բարձր հարգանքի էր արժանացել «Баилозе русс», (ռուսական դեսպան) անունը»<sup>1</sup>:

Քրդերը, թուրքիայից և Պարսկաստանից դադարելով Ռուսաստան, հիմնականում բնակություն էին հաստատում Արևելյան Հայաստանում: Դա ինքնըստինքյան պարզ է, քանի որ քուրդ ժողովուրդը ձգտում էր դեպի հայ ժողովուրդը, որը հանդիսանում էր իր բախտակից դարավոր բարեկամը: Արևելյան Հայաստանում հայերը և քրդերը, ապրելով կողք-կողքի, միշտ հարդանք են տածել իրար նկատմամբ, համակրել մեկը մյուսին, և դա էլ ազդեց էր ուժեղացնում ու ամրացնում նրանց բարեկամական կապը:

Այս բոլորի հետ մեկտեղ պետք է նշել նաև այն, որ ցարական կառավարությունը, ելնելով իր նվաճողական շահերից, իր հերթին ձգտում էր բանդել այդ երկու ժողովուրդների բարեկամությունը, առիպել քրդերին, որ նրանք թողնեն

<sup>1</sup> «Известия Министерства иностранных дел», 1915, кн. IV, Петербург, стр. 179.

<sup>1</sup> «Известия Министерства иностранных дел», 1915, кн. IV, Петербург, стр. 179.

հայկական գյուղերը, զբաղվեն քոչվորությամբ, իսկ նրանց հողերը հանձնել տեղական կալվածատերերին, 1891 թվականի մարտ ամսվա ըսկրզքներին նրանքի նահանգապետի կողմից հրաման է արձակվում նոր Բայազետի, Գարաշիշալի գավառների գյուղերի զբնավորներին՝ անմիջապես գյուղերից դուրս հանել բոլոր բուրդ ցեղերին: Այս լուրը մեծ դժգոհություն է առաջացնում բրդերի մեջ: Այդ մասին «Մշակ» թերթը գրում է. «...Այդ տեսակետից տագնապը ընդհանուր էր բուրդ ամբոխի մեջ, մանավանդ աղքատ դասակարգի կարծիքը: Նրանք, երկար ժամանակ ապրելով հայ գյուղում, սովորել էին մեկը մյուսի նիստ ու կացին ու կյանքին: Քրդերը չին մոռանում հայերի կողմից ցույց տված երախտիքը: Մեր հարցմունքին, թե արդյոք շնորհակալ են հայերից, թե չէ, զժվար չէ՝ բաժանվել հայ ընտանիքից, պատասխանում են այդ բրդերից շատերը, որ ոչ միայն զժվար է թողնել հայ գյուղը, հայ ընտանիքը, այլ մինչև մահ իրենց հիշողությամբ մեջ անմոռանալի կմնա հայ գյուղերում ապրած ժամանակը: Այնուհետև նրանք ստում են՝ մեր սուկորը թեպետ բրդերից է, բայց միսը՝ հայերից է, և մենք պարտական ենք հայ ընտանիքներին»<sup>1</sup>:

Արևելյան Հայաստանում ապրող բուրդ ժողովրդի վիճակը է՛լ ավելի վատացավ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին: Տեղացի հայերի և աղբրեջանցիների համեմատությամբ բրդերը ավելի շատ հարկ էին տալիս պետությունը: Այսպես, օրինակ, Ապարանի շրջանի Միրաբ գյուղի բրդական հասարակությունը 1890 թվականից սկսած հարկ ու տուրք էր վճարում 2-րդ կարգի գրույթով, իսկ այդ շրջանի հայ և աղբրեջանական գյուղերը՝ 3-րդ կարգի՝ ցածր գրույթով<sup>1</sup>: Հետագայում ցարական կառավարությունն ավելացրեց հարկերը: Եթե 1884 թվականին արտոսվայրից յուրաքանչյուր տասներորդի դիմաց բրդերից գանձվում էր 10 կոպեկ, ապա 1893 թվականին՝ 35 կոպեկ, իսկ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ այդ հարկերը կրկնապատկվեցին: Քրդերը տնտեսական ճնշման հետ մեկտեղ ենթարկվում էին նաև ազգային-գաղութային ճնշման, նրանք զրկված էին ազգային ամեն մի իրավունքից:

Բուրդ ժողովրդի այս ծանր վիճակը շատ հաճախ հասցնում էր հյույթների և խռովությունների: Նրանք հաճախակի հրաժարվում էին ազաների, օդարաշինների համար աշխատելուց, այ-

<sup>1</sup> «Մշակ» № 48, 1891:

<sup>1</sup> Տե՛ս Ա. Ղամբարյան, Քրդերը Սովետական Հայաստանում, Երևան, 1957, էջ 9:

րում էին նրանց ունեցվածքը, հրաժարվում հարկեր մուծելուց։

Սակայն, շնայած ցարական կառավարության ունեցրեախաներին, ազգային դադուխային քաղաքականութեանը, հայ և քուրդ ժողովրդի բարեկամութիւնը ամբողջովում ու նոր բովանդակութիւն էր ստանում Արևելեան Հայաստանում։

Արևելեան Հայաստանի միացումը Ռուսաստանին մեծապէս նպաստեց հայ կուլտուրայի, նրա սեռլուցիոն հասարակական մտքի զարգացմանը։ XIX դարում հայ ժողովրդի աստղավոր մարդիկ, նրա կուլտուրայի պրոգրեսիվ գործիչներն սկսում են ավելի մտորկից ծանոթանալ ոչ միայն հայերի, այլև Հայաստանում ապրող ալլազգիներին, հատկապէս քրդերի սոցիալ-տնտեսական պայմաններին ու կուլտուրական կյանքին։

Հայ և քուրդ ժողովուրդների միջև կուլտուրական կապերի զարգացման գործում մեծ աշխատանք է կատարել հայ նոր գրականութեան հիմնադիր, մեծ միպոստան, մանկավարժ ու լուսավորիչ Խաչատուր Արովյանը։

Խաչատուր Արովյանը համարվում է ոչ միայն իր ժամանակի հայ ժողովրդի մեծ լուսավորիչը, այլ նաև քուրդ ժողովրդի ամենամտ, սիրված ու հարգված մարդը։ Նա գրադվել է քուրդ ժողովրդի ազգագրութեամբ, քանահայտութեամբ, լեզվի, պատմութեան ու գրականութեան հարցերով։

Նանոթ լինելով քրդերեն լեզվին, Արովյանը շրջել է քրդերի մեջ, ուսումնասիրել նրանց նիստուկացը, սովորութիւնները և տվել պատմական հարուստ տեղեկութիւններ քրդերի ու նրանց լեզվի մասին։ Այդ տեսակետից ուսանելի է նրա «Курды» հոդվածը, որը տպագրվել է Քիֆիսում հրատարակվող «Кавказ» թերթի 1848 թվականի 46, 47, 49, 50 և 51 համարներում, իսկ Նետագայում՝ Հայկական ՍՍՐ գիտութիւնների տեղեկագրի Մ. Արևելեանի անվան գրականութեան ինստիտուտի կողմից հրատարակված Խ. Արովյանի երկերի լիակատար ժողովածուի ութերորդ հատորում։ «Курды» հոդվածի գերմաներեն ընագիրը Նետագայում ղոկոտր Մորից Վազները իրեն հավելված գեանդել է իր «Beitrag zur Naturgeschichte des Hochlandes Armenin» գրքում։

Խ. Արովյանը պայքարում էր անգրկովկասյան ժողովուրդների՝ հայերի, վրացիների, ադրբեջանցիները, քրդերի և մշուս ժողովուրդների բարեկամութեան ամբողջութեան համար։ Ասանց տարակուսանքի կարելի է ասել, որ Ռուսաստանում Արովյանը առաջինն էր, որ զբաղվեց քուրդ ժողովրդի պատմական անցյալով, նա Ռուսաստանում մեկն էր առաջիններից, որ ճնշված ու հալածված քուրդ ժողովրդի կյանքի հետ ծանոթացրեց ռուս ժողովրդին։

և Արովյանն իր զեղարվեստական գործերում  
և ուսումնասիրություններում միշտ առաջին պլա-  
նի վրա է դրել հայ և քուրդ ժողովուրդների բա-  
րեկամության հարցը: Այս բանը պարզորոշ կեր-  
պով երևում է նաև նրա «Վերք»-ում: Աղասու  
խմբում հանդես են գալիս նաև քրդեր, որոնք  
երգվում են հայերի հետ միասին մինչև իրենց  
արյան վերջին կաթիլը պայթարել թուրքական և  
պարսկական բռնակալների դեմ: Եվ վերջապես,  
հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության  
բնորոշ արտահայտությունը է. Արովյանի այն  
բազմահարուստ ուսումնասիրություններն են,  
որոնք վերաբերում են քուրդ ժողովրդի ծագման,  
լեզվի, պատմության, ազգագրության, բանահյուս-  
ության և այլ հարցերին:

Արովյանը, խոր կերպով ուսումնասիրելով  
քուրդ ժողովրդի պատմությունը, բարբերն ու սո-  
վորությունները, տալիս է զբանց բացատրությու-  
նը: Մի կողմ թողնելով այդ հարցերի մանրա-  
մասն քննարկումը, ծանոթանանք այն հարցին,  
թե հայ մեծ լուսավորիչը ինչպես է արձագանքել  
հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությանը:

և. Արովյանը այն կարծիքն է հայտնել, որ  
հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը  
գալիս է դարերի խորքից: Նա գրում է. «...Իրենց  
հարևան ազգերից ոչ մեկի հետ նրանք (քրդերը—  
Կ. Չ.) այնպես սերտ չեն կապված, այնպես հա-

մատեղ չեն գործում, ինչպես հայերի, որոնց  
նրանք անվանում են եղբայրներ»<sup>1</sup>:

Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունն  
իր արտացոլումն է գտել նաև հայ նշանավոր  
գրող Պերճ Պոռչյանի ստեղծագործություններում:  
Պոռչյանը վեր է հանել հայ, քուրդ և աղբրեջան-  
ցի ժողովուրդների համատեղ պայքարը արտա-  
քին ու ներքին թշնամիների, շահագործողների,  
կալվածատերերի, բեդերի, աղանների դեմ: Նա  
ցույց է տվել հայկական գյուղի ծանր վիճակը,  
նշել է, որ ոչ միայն հայերը, այլև մյուս ժողո-  
վուրդները հալածաբարպես ճնշվում, հայածվում  
ու կեղեքվում են հարուստների ու յասաուլների  
կողմից:

Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությու-  
նը պարզորոշ կերպով դրսևորվել է նաև հայ խո-  
շոր վիպասան Բաֆֆու ստեղծագործություննե-  
րում: Բաֆֆին հատկապես իր «Ճալալիդդին» և  
«Կայծեր» վեպերում շատ դիպուկ կերպով քն-  
նադատում է թուրքական կառավարությանը, որը  
ազգամիջյան կոիվներ էր հրահրում և աշխատում  
ամեն մի ստիժով հայերին և քրդերին հանել

1 և. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 8,  
երեսն, 1955, էջ 260:

իրար դեմ: Նա լարում էր ոչ միայն հային քրդի դեմ, այլ նաև քրդին՝ քրդի դեմ:

Բաֆֆին ասում է. «Թուրքերը քրդերին լարում էին հայերի դեմ, օգտագործելով կրոնը, մահմեդականությունը»<sup>1</sup>:

Միաժամանակ Բաֆֆին նշում է, որ ոչ բոլոր քրդերն էին խաբվում թուրքական սիրաշահումներից, նրանցից շատերը սարի էին կառնում և հայերի հետ մեկտեղ պայքարում թուրքերի դեմ: Այս միաբը նա որոշակիորեն արտահայտել է «Ջալալեդդին» վեպում: Թուրքական կառավարության կողմից հովանավորվելով, Ջալալեդդինը հարձակման է անցնում հայերի դեմ: Բայց ոչ բոլոր քրդերն էին մասնակցում այդ շարժմանը, իսկ Հայդարանցիները մտո էին հայերին և նույնիսկ օգնում էին նրանց<sup>2</sup>:

Բաֆֆին մասնանշում է, որ քրդերից շատերը աչքան էին մոտ կանգնած հայերին, որ դարձել էին ինչպես մի բնտանիքի անդամներ: «Ջալալեդդին» վեպի հերոսներից մեկը՝ քուրդ Մըստան, ատելությամբ էր լցված դեպի թուրքական կեղեքիչները և մեծ հարգանք ուներ հայերի

նկատմամբ: Բաֆֆին բարձր է գնահատում քրդի հավատարմությունը, նրա հերոսությունը: Հանձին քուրդ Օմար աղայի Բաֆֆին ցույց է տվել քրդերի ջերմ բարեկամական կապերը հայերի հետ: Օմար աղան շմասնակցից Ջալալեդդինի արշավանքին: Իմանալով, որ թուրքերը և Ջալալեդդինի խոտմը պետք է հարձակվեն Աղբակի վրա, անմիջապես գալիս է Բարդուղիմեոս առաքյալի վանքը և հայանում վանահայր Եղիազար վարդապետին, թե մի քանի օրից հետո ինչպիսի դառը վիճակ է սպասվում Աղբակի հայերին: Նա խորհուրդ է տալիս վանահորը՝ օգտվել վանքի անձատչելի ամրություններից և այնտեղ հավաքել շրջակա գյուղերի հարստություններն ու պայքարել թշնամու դեմ: Օմար աղան խոստանում է ինքն էլ միանալ վանահորը և իր խոստումները զործի վերածել<sup>3</sup>:

Եղիազար վարդապետն ընդունում է իր վաղեմի բարեկամ Օմար աղայի խորհուրդը: Օմար աղան մինչև վերջ հավատարիմ է մնում հայերին<sup>4</sup>:

Բաֆֆին շատ բարձր է գնահատել քրդական

<sup>1</sup> Բաիլի. Երկերի ժողովածու, հատ. 3, Երևան, 1955, էջ 48:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 16:

<sup>1</sup> Տե՛ս Բաֆֆի. Երկերի ժողովածու, հատ. 3, Երևան, 1955 թ., էջ 29—30:

<sup>2</sup> Տե՛ս Նույն տեղը, էջ 47:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 47—51:



ժողովրդական բանահյուսությունը, հատկապես ժողովրդական երգն ու երաժշտությունը:

Կոմիտասը նույնպես շատ մոտիկ էր կանգնած քրդական կուլտուրային և հենց քուրդ ժողովրդին, հետևաբար նա չէր կարող անտարբեր մնալ քուրդ ժողովրդի բազմահարուստ բանավոր ստեղծագործության հանդեպ: Նա մեծ հետաքրքրություն է հանդես բերել զեպի քրդական ժողովրդական երաժշտությունը: Այդ առումով նա շրջել է քրդերի մեջ, օրերով մնացել նրանց օրաներում, մասնակցել քրդական տոնական հանդեսներին, հարսանիքներին և զրի առել ու մշակել քրդական ժողովրդական երգերն ու պարերը:

Կոմիտասը 1899 թվականին Բեռլինում հանդես է գալիս քրդական երաժշտության մասին իր ուսումնասիրությանը, որը նրա դիպլոմային աշխատանքն է: Նա մեզ թողել է ձայնագրած 43 քրդական եղանակներ և որոշ արխիվային նյութեր: Ինչպես ասում է քրդական երաժշտության լավագույն մասնագետներից մեկը՝ Հակոբյան ՍՍԻ արվեստի վաստակավոր գործիչ Ս. Գասպարյանը, «Արխիվում պահպանված Կոմիտասի ձեռագրերից № 50 ծրարի մեջ զետեղված է 9 քրդական երգ, որոնք բոլորն էլ, ի բաց առջավ մեկը, գրված են հայկական ձայնանիշներով, խունացած թևերիկների վրա: Ուշագիտ կերպով զննողը նկատում է, որ հազիվ նշմարելի թանաքով

ու մատիտով գրված այդ ստեղծագործություններից մեկը քրդական նշանավոր «Լուր-դա-լուր»-ի երաժշտության կոմիտասյան քառաձայն մշակման էօբիղն է»<sup>1</sup>:

Կոմիտասի արխիվի № 50 ծրարի 7-րդ թևերիկի վրա նրա ձեռքով հայկական Լայնանիշներով գրված է մի ձայնաշար, որն անվանված է «Քրդական հնգյակի շղթա»<sup>2</sup>:

Կոմիտասի կողմից քրդական ժողովրդական երգերի հավաքումն ու ձայնագրումը, նրա ուսումնասիրությունները քրդական երաժշտության քննազավառում մի նոր էջ բացեցին քուրդ ժողովրդի կուլտուրայի և հատկապես նրա երաժշտության զարգացման գործում: Եվ միանգամայն ճիշտ է Ս. Գասպարյանը, երբ Կոմիտասին համարում է «Քրդական պոլիֆոնիկ բազմաձայն երաժշտության պիոները»<sup>3</sup>: Քրդական երգերի հավաքագրման և մշակման գործում արժեքավոր աշխատանք է կատարել Կոմիտասի աշակերտ ու նրա մեծ գործի շարունակող Սպիրիդոն Մելիքյանը<sup>4</sup>:

<sup>1</sup> Ս. Կ. Գասպարյան, Կոմիտաս, Երևան, 1951, էջ 175:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 183:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 47-51:

<sup>4</sup> Տե՛ս Սպիրիդոն Մելիքյան, Հայ ժողովրդական երգեր և պարեր, հատ. I, Երևան, 1949:

Արտվյանի, Բաֆֆու, Պոռշյանի, Կոմիտասի այս մեծ ծառայությունները քուրդ ժողովրդի պատմության, բանահյուսության և երաժշտության զարգացման գործում հայ և քուրդ ժողովուրդներին բարեկամության մի նոր, վառարանահայտություն են:



Յարական Ռուսաստանի տիրապետության տակ ապրող քուրդ ժողովուրդը, որը հիմնականում կենտրոնացած էր Արևելյան Հայաստանում, շնայած իր ծանր վիճակին, մասամբ կապվեց հողի հետ և սկսեց աստիճանաբար անցնել նրատակաց կյանքի: Հայաստանում սկսեց արագորեն աճել քուրդ քնակչության թիվը:

Այսպիսով, շնայած թուրքական և պարսկական պետությունների նենդ բազարականությանը, որը զնամ էր սզզամիջյան կոիվներ ստեղծելու ճանապարհով, և ցարական Ռուսաստանի ազգային-դաղութային բազարականությանը, հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը զնալով էլ ափելի ամրապնդվեց: Այդ բարեկամությունը լննիյան ազգային բազարականության շնորհիվ մի նոր որակ գտավ Հակահեբերյան սո-

ցիալիստական մեծ ղեկուցիայից հետո, հասկապես այն ժամանակ, երբ Հայաստանի վրա շողշողաց ազատության գրոշը, մի գրոշ, որը ազատություն բերեց Հայաստանում ապրող քուրդ ժողովրդին:

**ՔՐՊԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: ՀԱՅ ԵՎ  
ՔՈՒՐԳԻ ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐԻ ԼՆԵՆՆԱՆ ԹԱՐԵԿԱ-  
ՄՈՒԹՅՈՒՆԸ**

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ուն-  
լլուցիան և Հայաստանում սովետական կարգերի  
հաստատումը հայ և քուրդ ժողովուրդների պատ-  
մության մեջ մի նոր, երջանիկ դարադաշտի քա-  
ցեցին, է՛լ ավելի ամրապնդելով այդ երկու ժո-  
ղովուրդների բարեկամությունը, որը խաբսխված  
է մարքս-լենինյան ինտերնացիոնալ սկզբունքնե-  
րի վրա: Միայն սովետական կարգերի շնորհիվ  
էր, որ հայ և Հայաստանում ապրող քուրդ ժո-  
ղովուրդները լիովին և վերջնականապես ազա-  
տագրվեցին ամեն տեսակի ազդային և սոցիա-  
լական ճնշումներից ու հարստահարություններից:  
Վ. Ի. Լենինը ոտնական պրոլետարիատի առաջ-  
նահերթ խնդիրն էր համարում՝ ճիշտ մտանցույ  
ցուցարարել ոչ-ոռա ժողովուրդների նկատմամբ,

բարեկամական կապեր հաստատել քուրդ ժողո-  
վուրդների միջև: Լենինը մեծ պատգամ է թողել  
մեզ. «...հարկավոր է այլազգիի նկատմամբ ունե-  
ցած իր վերաբերմունքով կամ զիջումներով այս-  
պես թե այնպես փոխհատուցել այն վստահու-  
թյունը, այն կասկածամատությունը, այն վիրավո-  
րանքները, որ պատմական անցյալում նրան  
հասցրել է «մեծապետական» ազգի կառավարու-  
թյունը»<sup>1</sup>:

Հոկտեմբերյան ուսլլուցիայից հետո Լենինի  
պատգամները իրականացվեցին, մեկընդմիջա  
փոխվեցին ազդային ֆնադավառում նախկինում  
եղած անվստահելի փոխհարաբերությունները,  
լիկվիդացվեցին ժողովուրդների միջև եղած ատե-  
լությունն ու թշնամական փոխհարաբերույունե-  
ները, սովետական երկրում ապրող ժողովուրդ-  
ների միջև ստեղծվեցին կուռ, անխախտելի  
բարեկամության, եղբայրական համագործակցու-  
թյան և փոխազդրած օգնության հարաբերություն-  
ներ, որոնք ամրապնդվում էին մեծապետական  
շովինիզմի, տեղական նացիոնալիզմի և այլ թրշ-  
նամի հոսանքների դեմ մղվող անհաշտ պայքա-  
րում:

Հայաստանում սովետական կարգեր հաստատ-  
վելուց հետո ամեն ինչ արվեց ինչպես քուրդ ժո-

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 36, էջ 703.

զովորի, այնպէս էլ մյուս ժողովուրդները՝ ձեռվ ազգային, բովանդակութեամբ սոցիալիստական կուլտուրայի ծաղկման և բարգաւաճման համար: Սովետական Հայաստանի նորաստեղծ կառավարութեանը միջոցներ ձեռնարկեց բարդ ժողովրդին կապելու հողի հետ, դարձնելու նստակյաց, քանի որ այդ ժամանակ Արեւելյան Հայաստանում ապրող քրդերից 14675 մարդ դեռևս վարում էր քոչվորական կյանք<sup>1</sup>: Քուրդ քոչվորներին հանձնելովում էին սղատ հողամասեր, կուլակներին քանակաբաժան հողերի մի մասը՝ անվճար օգտագործման համար:

Հայաստանի սովետականացումից հետո, հենց առաջին տարիներին, քրդերին հատկացվեց 15 գյուղ 6 109 դեպիտան ընդհանուր հողային տարածութեամբ: Այդ գյուղերից էին Անիկանյանի գավառի 7-րդ և 6-րդ գավառումսի Գուլքըյանչ, Սարունչի, Գյալթո, Հակո, Արթիթաթա, Քլլթ, Էջմիածնի գավառի Ղամուշլու, Ղարխուն, Ղարուարազ, Անգրտակ, Ախաբապատ և Ախաբու գյուղերը: Այս գյուղերում բնակվում էին 2456 եզդիներ (քրդեր — 4. 2.) և 765 հայեր ու աղբբեջանցիներ<sup>2</sup>: Այդ գյուղերի հայերի, քրդերի և

<sup>1</sup> Տե՛ս ՍՄԿՊ ԿԿ-ին կից մարքսիզմ-լենինիզմի ինստ. հանլ. ֆիլիալի արխիվ, 1926, ֆ. 1, գ. 302, ք. 1:

<sup>2</sup> Տե՛ս ՍՄԿՊ ՀԵՍԵ ՊԿԱ, ֆ. 112, ց. 2, գ. 1466, ք.

աղբբեջանցիների միջև ստեղծվել էին բարեկամական հարաբերութեաներ, որն էլ այնչի կուրացավ շնորհիվ կոմունիստական պարտիայի վարած լենինյան ազգային քաղաքականութեան: Հետազհետե միջոցառումներ էին ձեռնարկվում քուրդ քոչվորներին հողով ապահովելու համար: 1924 թվականին Արեւստեղրապոլի գավառում արդեն կար 13 քրդական գյուղ, նրանի գավառում՝ 6, նոր Բայազետի գավառում՝ 5, այնուհետև քրդական հարյուրավոր բնասանիքներ բնակութեան են հաստատել հայկական գյուղերում, կապվել հողի հետ, իրենց հայ բարեկամներին ընդօրինակել այգեգործութեանն ու բամբակենու մշակութեանը: Էջմիածնի գավառում և Գաղաթում շկար մի հայկական գյուղ, ուր բնակութեան հաստատած չլինեք մի քանի քրդական բնասանիք: Այդ շրջանների հայերը ուրախանում էին, որ քրդերը կարճ ժամանակամիջոցում սովորում էին գաղտային աշխատանքը և այն առաջ տանում կարմատկերպոված ու միասնական ուժերով<sup>1</sup>:

Սովետական Հայաստանի նորաստեղծ կառավարութեանը ամեն ինչ անում էր Հայաստանում ապրող քուրդ ազգաբնակչութեան կյանքը սոցիալիստական հիմունքներով կառուցելու, նրանց

<sup>1</sup> Տե՛ս ՍՄԿՊ ԿԿ-ին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հանլ. ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 4, գ. 291, էջ 5:



ազգային կուրսուրան զարգացնելու համար և այլն: Կասկածից վեր է, որ Հայաստանի կառավարության հոգատար վերաբերմունքը զեպի իրեն էր ձգում այլ վաչրերում ապրող տասնյակ հաշուարվոր քրդերի, որոնք, դալով Հայաստան, իրենց բախար կապում էին հայ ժողովրդի հետ:

1926 թվականի ապրիլի 19—20-ը անդի ունեցավ Հայաստանի բուրգ ազգաբնակչության ակտիվի առաջին խորհրդակցությունը, որին ներկա էին Լենինականի և Էջմիածնի զավտոի 26 պատգամավորներ: Խորհրդակցությունը բննարկեց հետևյալ հարցերը. «Ընդհանուր բաղարական դրությունը», «Գյուղը և կոոպերացիայի զարգացման հեռանկարները», «Կուսակցականների խնդիրները տնտեսական աշխատանքի բնադալուում և ազգային փոքրամասնությունների մեջ տարվող աշխատանքում», «Քաղ. լուսավորական աշխատանքը և դպրոցական շինարարությունը», «Ընթացիկ հարցեր»: Խորհրդակցությունը մասնակցում էր ՀԿՊ Կենտկոմի առաջին բարտուղար Ա. Հովհաննիսյանը, որը, հանդես դալով զեկուցմամբ, կանգ է առնում բուրգ ժողովրդի անցյալի ու նրա կուլտուրայի վրա:

Պեսար է նշել, որ այդ տարիներին բազմաթիվ հայ բնիկների հետ բուրգ ինտելիգենցիայի ներկայացուցիչներ Արար Շամիրովը, Նուրե Պուլատովան, Շամիլ Քեմուրովը զգալի աշխատանք են

տանում բուրդ ազգաբնակչության մեջ, նրանց տնտեսական, կուլտուրական կյանքի բուրբ բնագավառներում:

Սովետական Հայաստանի կոմունիստական պարտիայի և նրա կառավարության կողմից ձևափոխված լայն միջոցառումները բուրդ ժողովրդի այդ փոքրաթիվ մասին կանգնեցրեց ազգային վերածննդի նոր ուղու վրա, մի ուղու, որը նոր դարագլուխ բացեց ամբողջ բուրդ ժողովրդի պատմության մեջ: Այս բանը ես մեկ անգամ ապացուցում է հայ և բուրդ ժողովուրդների լենինյան բրեկամությունը:



Բուրդ ժողովրդի կյանքում շրջադարձային կետ հանդիսացավ մանր, մասնավոր սեփականատիրական տնտեսություններից խոշոր կոլեկտիվ տնտեսությունների անցնելը, որով մեծ բեկում տեղի ունեցավ բուրդ շքավոր և միջակ գյուղացու կյանքում. նա կանգնեց գյուղի սոցիալիստական վերակառուցման ուղու վրա: Բուրդ աշխատավոր գյուղացիությունը, անցնելով տնտեսության կոլեկտիվ սիստեմին, սաք զրեց ունեւոր ու կրքանիկ կյանքի ուղու վրա, փոխվեց բրդական գյուղի գեմբը:

Հայաստանում ապրող բուրդ ազգաբնակչու-

թյան մեջ առաջին կոլեկտիվ տնտեսությունը կազմակերպվում է 1930 թվականին Լենինականի 7-րդ գավառամասի Զարչառիս գյուղում: Սկզբում կոլեկտիվ տնտեսություն կազմակերպելու գործում մեծ գործ կատարեց նույն գյուղի ուսուցիչ Աբրամ Մուրադյանը: Զարչառիս գյուղի օրինակով սկսվեց բրդական գյուղի անցումը կոլեկտիվ տնտեսությունների: 1931 թվականի հունվարի 1-ին արդեն բրդական 3 գյուղերում կազմակերպվել էին կոլեկտիվ տնտեսություններ՝ 34 ընտանիքով, իսկ 1932 թվականի հունվարի մեկին՝ 7 գյուղերում՝ 101 տնտեսություններ<sup>1</sup>: 1934 թվականին արդեն կոլեկտիվ տնտեսություններ էին կազմակերպվել բրդական 17 գյուղերում<sup>2</sup>: Հայաստանի կոմունիստական պարտիայի անմիջական ղեկավարությամբ բուրդ ազգաբնակչությունը կարճ ժամանակամիջոցում ընդգրկվեց կոլեկտիվ տնտեսությունների մեջ, որը մեծ շրջագամ էր բուրդ աշխատավորի կյանքում: Բրդական գյուղը մուտք գործեցին տրակտորն ու կոմբայնը, ձեթի ճրագի փոխարեն շողշողացին իլլիչի լապտերները:

Կոլեկտիվային կարգի հազմանակը բուրդ ժողովրդի կյանքում մի ռեյուլացիա էր, որին նրանք

<sup>1</sup> Տե՛ս ՍՍԿԳ ԳԿ-ին կից ժաբրեղմ-լենինիզմի ինտեխու-տի հայ-ֆիլիթալի արխիվ, ֆ. 1, ց. 15, գ. 319, էջ 6:

<sup>2</sup> Տե՛ս ՀՍՍՍՀ ԶԽԵ ԳԿԿ, ֆ. 112, ց. 2, գ. 1474, էջ 31:



ՀԱՅԹ Վեդու շրջանի Ավար գյուղի Կոլոնի Բասա Յուսուբովան այժմ գյուղի առաջավոր խաղողագուծու-  
նիներից է:

հասան րուս և հայ ժողովրդի անմիջական ու ան-  
շահախնդիր օգնությունը: Այդ կարգը է՛լ ավելի  
մեք ձեռքից հայ և քուրդ ժողովուրդներին:



Նախկինում քոչվոր, խաշնարած քուրդ ժող-  
վուրդը Սովետական Հայաստանում ծանոթացավ  
արդյունաբերության և տեխնիկայի հետ, նրա գա-  
վակներից շատ-շատերը, յուրացնելով իրենց հայ  
բարեկամների փորձը, դարձան արդյունաբերու-  
թյան առաջավորներ: Այժմ նրանք ոչ մի շանք  
չեն խնայում ՍՄԿՊ XXII համագումարի պատմա-  
կան որոշումները պատվով կատարելու համար:  
Զմույե Խալիլ Քանաքեռի այլումինի գործարանի  
էլեկտրոլիզի ցեխում է աշխատում և ամեն ամիս  
իր առաջադրանքները կատարում է 120—130 տո-  
կոսով: Երևանի պահեստամասերի գործարանի  
առաջավոր րանվոր Ահմադե Հոդոն իր բարեխիղճ  
աշխատանքի շնորհիվ վաչկեում է ողջ կուլեկտիվի  
համակրանքն ու հարգանքը: Երևանի ջերմաէլեկ-  
տրակայանի շինարարության առաջավոր բուլղո-  
ղերավար Ռզայե Աջոն 1962 թվականին սոցիալիս-  
տական մրցման մեջ էր մտել իր հայ ընկերների  
հետ և ամեն ամիս իր առաջադրանքները կատա-  
րում էր 140—150 տոկոսով: Նա համարվում է  
Երևանի ջերմաէլեկտրակայանի շինարարության

վարչության առաջավոր ու սիրված բանվորներից մեկը: ՍՍՍՄ Գերագույն սովետի նախագահությանն իր 1962 թվականի սեպտեմբերի 20-ի հրամանագրով նրան պարգևատրեց «Աշխատանքային արիության համար» մեդալով<sup>1</sup>:

Այստեղ հարգանքով են խոսում նաև առաջավոր կոունկավար Օնիկ Ռաշոյանի մասին: «Սովետական Հայաստան» թերթում նրա մասին գրված է. «Հեշտ չէ Օնիկի գործը: Շինարար-կառուցողները՝ մի կողմից, մոնտաժողները՝ մյուս կողմից առանց Օնիկի գործ անել չեն կարող: Գե, Օնիկ, արի ու ժամանակին բոլորին էլ հասիր: Մանավանդ այդպիսի կոունկոյլ» (Այս կոունկոյլ իր մեծությամբ Հայաստանում միակն է, 40 տոննա բեռնապարողություն ունի— Վ. Գ.): Հեշտ չէ Պետր է Նիշու հաշվել, թե ինչպիսի ծանրություն են բարձրացնում, որ քսա այնմ էլ սլարի թերությունը պահպանեն պատերի լաբիրինթոսի մեջ և 30 տոննանոց բեռով մանևրես, երկաթ-բետոնի հակա կոնստրուկցիաները միանգամից տեղը դնես: Հնասարուկցիաները միանգամից տեղը դնես: Հնասարուկցիան, փորձ, գիտելիք, աշխատի ու էլի նման բաներ են պետք:

Հմուտ կոունկավար է Օնիկ Ռաշոյանը, լավ էլ աղա է: Այնքան լավը, որ նրա մասին բոլորը խոսում են ինչպես իրենց բարեկամի: Այդպես էլ

կա: Նրանք բարեկամներ են: Դա ոչ միայն կոունկավարի, մոնտաժողի ու շինարարի բարեկամություն է: Ոչ, դա թիչ կլինի: Դա նաև որս մոնտաժողի, քուրդ կոունկավարի, հայ շինարարի բարեկամությունն է, մեծ բարեկամություն...<sup>2</sup>:



Քուրդ ժողովրդի կուլտուրայի զարգացման գործում վճռական նշանակություն ունեցավ կոունկավարական պարտիայի և սովետական պետության սովետական հողատարությունը: Սովետական կառավարության առաջին ղեկերտները և միջոցառումները ժողովրդական կրթության, կուլտուրաավորական աշխատանքների, գրականության և այլ առարկաների համար ուղեհիշներ հանդիսացան ինչպես Սովետական Միության մյուս ժողովուրդների, այնպես էլ Սովետական Հայաստանում ապրող քուրդ ժողովրդի ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի ձևավորման և զարգացման համար:

1921 թվականի սեպտեմբերին Հայաստանի ժողկոմատվետը ղեկերտ ընդունեց անգրագիտության վերացման մասին<sup>3</sup>: Այդ նոյն թվականի

<sup>1</sup> «Սովետական Հայաստան», № 178, 1962:

<sup>2</sup> Տե՛ս ՍՄԿՊ ԿԿ-ին կից մարտի 4-ին Կիևի Կենտրոնական հայկ. ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 1, գործ. 203, էջ 9:

<sup>3</sup> Տե՛ս «Коммунист» № 241, Երևան, 1962:



սեպտեմբեր ամսին Աշտարակում բացվում են կուրսեր, որտեղ հայ բնակիչների անմիջական հրահրություններով ստորաօտովում են մանկավարժներ՝ բրդական գյուղերում դպրոցներ բաց անելու համար<sup>1</sup>։

Այս դասընթացները ղեկավարում էր Լազոն (Հակոբ Ղազարյանը)։ Չնայած այստեղ մանկավարժների մեծ մասը հայեր էին, բայց ուսուցումը ընթանում էր բրդերեն լեզվով։ 1921 թվականի նոյեմբերին այդ դասընթացն ավարտած Արամ Մուրադյանը, Նշան և Քազուհի Ռշտունյանները, Սողոմոն Սարգսյանը, Սոկրատ Մկրտչյանը և ուրիշներ սրպես մանկավարժներ աշխատանքի են ուղարկվում Ապարանի, Աշտարակի, Քալինի, Հոկտեմբերյանի շրջանի բրդական գյուղերը։ Առաջին բրդական դպրոցները բացվեցին 1921 թվականին Ապարանի շրջանի Զարջուտի, Ղոնդաղազ, Զարանազ, Մեծ Զամուշի և այլ գյուղերում։ Այդ թվականին, գյուղացիության անզրահիտությունը վերացնելու կապակցությամբ, տասնյակ հայ և բուրգ մանկավարժներ ուղարկվեցին գյուղերը, բացվեցին բազմաթիվ դպրոցներ, լիկկայաններ։

Հայկական ՍՍՌ լուսժողովատի անմիջական հանձնարարությամբ Լազոն հայկական տառերը հարմարեցրեց բրդերի հնչյունաբանությունը, կազ-

մեց բրդական նոր այբբենաբան և այդ այբբենաբանով փոքրահասակների համար գրեց Անդրկովկասում առաջին բրդերեն դասագիրքը «Շամս» խորագրով (հրատարակվել է 1921 թ. էջմիածնում, նույն թվականին հրատարակվել է «Կոտայք աստղ» խորագրով մի այլ դասագիրք՝ մեծերի համար)<sup>1</sup>։

Տարեցտարի Հայաստանում աճում էր բրդական դպրոցների թիվը։

1924 թվականի նոյեմբերի 15—17-ը վաղաբապատում տեղի ունեցավ բուրգ ուսուցիչների համագումարը։ Համագումարին մասնակցում էր ՀԿՊ Կենտկոմի հրահանգիչ Ա. Շամիրովը, հայ մանկավարժներ Մխիթարյանը, Ռշտունին, Ջալիլյանը և Մուրադյանը։

Այդտեղ հարց դրվեց պատրաստել բրդական ինտելիգենցիա և բուրգ երիտասարդներ ուղարկել Ռուսաստանի քարձադույն դպրոցները, հատկապես Լենինգրադի արևելադիտություն ինստիտուտը։ Ա. Շամիրովը հույսով անեցավ բրդական դպրոցների վիճակի մասին, նա հարց ասուց բաշեց բրդական նոր այբբեն կազմելու մասին և խնդիր գրեց դարձ այլ դպրոցական գործին<sup>2</sup>։

1 Տե՛ս «Նորհրդային Հայաստան», № 167, 1921.

2 Տե՛ս ՍՄԿՊ ԿԿ-ին կից մարքեղմ-լենինգրդի ինստիտուտի հայկ. ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 4, գ. 317, էջ 78:

1 Տե՛ս «Նորհրդային Հայաստան» № 179, 1921.

նոր քրդական այբուբենն կազմելու առաջարկը բխում էր նրանից, որ հայկական տառերի հիման վրա կազմված այբուբենը լրիվ կերպով չէր համապատասխանում քրդական կուլտուրայի պահանջներին, նրա լեզվի հնչյունաբանությանը:

1927 թվականին Հայկական ՍՍՌ լուսժողովմասը հատուկ որոշում ընդունեց նոր քրդական այբուբենն կազմելու համար: Նոր այբուբենը պետք է հիմնված լիներ լատինական տառերի վրա: Այս պատվավոր գործը հանձնվեց սովետա-քրդական գրականության հիմնադիր Արար Շամիրովին, որին աջակցեց նաև վերին դիվիզիոնի ասորի Իսահակ Մարանգուզովը: Այնուհետև կազմվում է կոմիտե քրդական նոր այբուբենի նախապատրաստական աշխատանքների համար:

1926 թվականին ՀՍՍՌ Կենտրոնական գործադիր կոմիտեն հրավիրում է քրդական նոր այբուբենն կազմողների կոմիտեի նիստ, որտեղ վերջնականապես որոշվում է նոր այբուբենն կազմելու հարցը: Հայկական ՍՍՌ Կենտգործկոմը առաջարկում է լուսժողովմասին ներկայացնել այբուբենն կազմելու ծախսերի հետ կապված նախահաշիվը:

1928 թվականի սեպտեմբերին հաստատվում է այդ նախահաշիվը՝ № 25 258 ռուբլու գումար է բաց թողնվում այբուբենն կազմելու համար:



Հայկաֆ Օրբելին (կենտրոնում) մի խումբ ուսուցիչների հետ:

Քուսն հռահնդով է լծվում նոր աչքուրեն կազմելու գործին Ա. Շամիրովը. նա գործուղվում է Լենինգրադ, որտեղ նրան մեծ օգնություն է ցույց տալիս ակադեմիկոս, հայտնի արևելագետ Հովսեփ Արզարի Օրբելիևի<sup>1</sup>:

1929 թվականին նորաստեղծ այբուրենը դրվում է գործածության մեջ: Այդ ժամանակից սկըսած արագ ընդլայնվում է քրդական դպրոցների ցանցը, ստեղծվում է քրդական գրականություն, ավելանում է քուրդ մանկավարժների թիվը:

Մակայն, հաշվի առնելով քուրդ աշխատավորության պահանջը, նրա ձգտումը՝ ավելի մոտ կանգնել սովետական ժողովուրդների կուլտուրային, գիտությունը և գրականությանը, 1941 թվականին Հայկական ՍՍՌ լուսժողովումստը հանձնարարում է Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի գիտաշխատող և գրող Հաջիև Ջեզուն՝ կազմել քրդական այբուրեն ուստական տառերի հիման վրա, որը և նա կատարեց նույն թվականին: Հայկական ՍՍՌ Ժողովուրդները հաստատում է ուստական տառերի հիման վրա կազմված՝ 39 տառից բաղկացած քրդական նոր այբուրենը: Այդ նույն թվականին մշակվեցին քրդական լեզվի ուղղագրական կանոնները:

Սակայն Հայրենական մեծ պատերազմը ժամանակավորապես հետաձգեց այդ այբուրենի օգտագործումը: Միայն 1944 թվականին Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտկոմը և Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետը հանձնարարում են լուսավորության մինիստրությանը՝ կարճ ժամանակամիջոցում գործածության մեջ դնել քրդական նոր այբուրենը:

Այդ նույն թվականին ՀՍՍՌ լուսավորության մինիստրությունը կազմում է հատուկ հանձնաժողով, որը պետք է վերանայր այդ այբուրենը: Հանձնաժողովի մեջ էին ՀՍՍՌ լուսավորության մինիստրի տեղակալ Արամ Ղազախեցյանը (նախագահ), հայ ակադեմիկոս գիտնականներ Հ. Աճառյանը, Գ. Ղափանցյանը, Ա. Զավարյանը, Ա. Ղանալանյանը, ինչպես նաև Հաջիև Ջեզուն, Ամինև Ավդալը, Վազիրև Նադիրին և Նադո Մախմուդովը:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ուստական տառերի հիման վրա կազմված այբուրենի նախագիծը, հանձնարարում է քուրդ գրողներ Հաջիև Ջեզուն, Ամինև Ավդալին և Վազիրև Նադիրին՝ վերամշակել պոլոթյուն ունեցող այբուրենը: Իսկ 1944 թվականին արդեն այդ այբուրենը գրվում է գործածության մեջ:

Ինչպես տեսնում ենք, քրդական այբուրենի կազմման գործում շատ մեծ է Հայաստանի կա-

<sup>1</sup> Տե՛ս «Մյա Բազա», № 35, 1962:

ասվարութեան և հայ պիտանականների լուսման, որը, իրօք, եղբայրական անկեղծ օգնութիւնն էր քուրդ ժողովրդին:

Քրդական այրուքներ մի նոր ուղի բացեց քրդական գրականութեան գորգացման համար: Սովետական Միութեան ժողովուրդների Եղբայրական բնտանիքում քրդական գրականութեան և, բնդհանրապէս, քուրդ ժողովրդի կուլտուրայի համար սկսվեց մի ոսկեդար: Չտեսնված քայլերով սկսեց զարգանալ քրդական սովետական գրականութիւնը. մի գրականութիւն, որն սկսեց զարգանալ և ձևավորվել մարքս-լենինյան էսթետիկայի սկզբունքներով: Քրդական սովետական գրականութիւնը, իր հիմքում ունենալով ժողովուրդների անխախտ բարեկամութիւնը, լենինյան ինտերնացիոնալիզմը, սկսեց զարգանալ և ձևավորվել՝ անհաշտ պայքար մղելով ազգային սահմանափակվածութեան և բուրժուա-նացիոնալիստական գազափարախոսութեան դեմ:

Քրդական սովետական ազգային գրականութիւնն սկսեց իր ծաղկումը ապրել 1930 թվականից: Եվ հենց այդ տարիներին՝ երկրի ինդուստրացման, կոլեկտիւնացման շինարարութեան շրջանումն էր, որ աննախընթաց վերելքով սկսեց ամրապնդվել հայ և քուրդ սովետական գրական կապերը: Հենց այդ տարիներից սկսած հայ և քուրդ ժողովուրդների բարեկամութեան թեմատի-

կան ավելի պարզ և որոշակի երևաց թե՛ հայ և թե՛ քուրդ գրողների ստեղծագործութիւններում:

Այդ թվականներին գրական առաջնեց են իջնում քուրդ գրողներ Աբար Շամիրովը, Հաջիե Ջնդին, Ամինե Ավդալը, Ջասիմե Ջալիլը, Վազիրե Նադիրը, Ջարդոյի Գենզոն, Ղաշաղե Մադր և Մյուսները:

Հայ նշանավոր գրող Նաիրի Ջարյանը քուրդ գրողների այդ խմբին համարում է «Քրդական գրականութեան առաջին ձնծաղիկները», — ձնծաղիկներ, որոնք նոր-նոր սկսում են իրենց զլխիկները բարձրացնել զարավոր գրադրութեան ու հետամնացութեան թանձր սառույցի տակից»<sup>1</sup>:

Քուրդ ավազ սերնդի գրողները մեծ եռանդով լծվեցին նոր գրականութեան ստեղծման գործին: Նրանք իրենց ստեղծագործութիւններում գովերգում են նոր կյանքը, սովետական ազատ մարդուն, ժողովուրդների բարեկամութիւնը: Նրանք իրենց գրչով խարսգանում են հին կենցաղից մընացած վատ սովորութիւնները, նրանց ստեղծագործութեան առատ նյութ էր տալիս մեր ժողովուրդների եռանդուն աշխատանքը հանուն կոմունիզմի կառուցման մեծ գործի:

Քրդական սովետական գրականութեան մեջ իր սրույն տեղն է գրավում բազմադարյան քրդական

<sup>1</sup> «Խորհրդային քուրդ գրողներ», Երևան, 1936, էջ 81:

ժողովրդական ֆուկլորի մշակումը: Սովետական Հայաստանում և ամենուր հայ և քուրդ գրողների, բանասերների, ազգագրագետների և բանահավաքների կողմից հավաքվում ու մշակում են բրդրդական ֆուկլորի գոհարները:

Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության թեմատիկան իր լայն տարածություն է գտել սովետական քուրդ գրողների բազմամիջ գործերում: Քուրդ գրող Արաբ Շամխուլի գրչին են պատկանում այնպիսի դեղարվեստական գործեր, ինչպիսիք են «Քուրդ հովիվը» պատմվածքների ժողովածուն, որը թարգմանվել է Ֆրանսերեն, արաբերեն, ռուսերեն, վրացերեն և այլ լեզուներով: Հայ և քուրդ ժողովուրդների լենինյան բարեկամությունը վառ գույներով արտացոլված է նրա «Լուսաբաց», «Արագածի քրդերը» վիպակներում և «Բախտի ճանապարհ» վեպում: Վիպակներում պատկերված է Սովետական Հայաստանում ապրող քուրդ ժողովրդի վերափոխված կյանքը և նրա պայծառ գայիքը: «Բախտի ճանապարհ» վեպը հիմնականում գրված է հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության հարցի շուրջը: Այս վեպը 1959 թվականին Հայպետհրատի կողմից քրդերեն լեզվով հրատարակվեց «Նրջանիկ կյանք» խորագրով, իսկ 1961 թվականին՝ հայերեն լեզվով: Վեպը հայերեն թարգմանել է գրող Վահան Գրիգորյանը:

ժողովուրդների բարեկամության թեման և, հատկապես, հայ և քուրդ ժողովրդի բարեկամությունը պարզորոշ կերպով արտահայտվել են նաև սովետական նշանավոր քուրդ գրող Հաջին Ջնգու ստեղծագործություններում: Նրա գրչին են պատկանում «Նոր առավոտը», «Քրդական ժողովրդական հերիաթներ», «Քյուր-ողին քրդական էպոսում» երկերը: Նա գրական մշակման է ենթարկել «Մամե ու Ջինե» սիրային-հերոսական վեպը: Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության գրեկորման փաստերից մեկն էլ այն է, որ 1933 թվականին Հաջին Ջնգու, Վ. Պետոյանի, Ամինե Ավդալի և Ջարգոյե Գենչոյի նախաձեռնությամբ կազմվում է «Հայ-քրդական բառարան»-ը, որն իր մեջ պարունակում է 10 հազար բառ: Իսկ 1935 թվականին հրատարակվում է Ա. Խաչատրյանի և Հ. Ջնգու կողմից կազմված քրդական բերականության դասագիրքը: 1953 թվականին լույս է տեսնում Հաջին Ջնգու «Սովետական Հայաստանի քրդական գրականությունը» խորագրով գրքուկը, որտեղ հեղինակը հանդամանորեն կանգ է առնում Սովետական Հայաստանում քրդական գրականության զարգացման հարցերի վրա:

1955 թվականին Հաջին Ջնգին քրդերեն լեզվով հրատարակում է Իսահակյանի բանաստեղծությունների և պատմվածքների մի ժողովածու:

«Քուրդ Ամոն» խորագրով: Քուրդ ժողովուրդը առաջին անգամ իր մայրենի լեզվով կարդում է մեծ վարպետի աննման կտավները, ծանոթանում նրա ուսուցիչական հմայիչ քնարին:

Հաջիե Զնդին նաև բազմաթիվ թարգմանություններ է արել հայ և ուրիշ ժողովուրդների նըշանավոր գրողների ու բանաստեղծների ստեղծագործություններից: Նա ունի բազմաթիվ ստեղծագործություններ՝ նվիրված հայ ժողովրդին, Հայաստանի, ժողովուրդների բարեկամությունը:

Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության վառ արտահայտությունն է 1963 թվականին հըրատարակված Հ. Զնդու «Մազկեփունե» խորագրով ժողովածուն<sup>1</sup>: Այս ժողովածուում զետեղված են հայ գրողների Աբովյանի, Բաֆֆու, Հովհ. Քումանյանի, Ավ. Իսահակյանի, Գ. Դեմիրճյանի, Ստ. Ջորջյանի, Կ. Սիապի, Միրանի, Տարոնցու, Ասրամենի, Վ. Գրիգորյանի, Հովհ. Շիրազի և այլ գրողների այն սակզծագործությունները և ջերմ խոսքերը, որոնք վերարերում են քրդերին: Այս, այդ ժողովածուն իրոք մի ծաղկեփունե է, որից բուրում է հայ և քուրդ ժողովուրդների դարավոր բարեկամությունը:

<sup>1</sup> Ав. Исаханян, Эмос кюрманци, Ереван, сала 1955-а.

<sup>2</sup> Н. Шьнди, Дәстәгдәл, Ереван, сала 1963.



Պափետյան, Մուրյան, Հեռունե ևստեղ Սիապեզով (սախիլ), զենեուլ-վե-սեներու Ս. Մարտիրոսյան և զենեուլ-սոյուր Ա. Սարսպեզյան

Սովետական բուրգ նշանավոր գրողներից մեկն է Ամինն Ավդալը: Նա, տասնյակ-հազարավոր ուրիշ գրողների հետ միասին, ազատվելով թուրքական բռնակալների յաթաղանից, իր հանգրվանն է գտնում Սովետական Հայաստանում:

Նրա ստեղծագործական գրչին են պատկանում «Մահմեդ բեկը և Մուսան», «Զասմ և Քոսուն», «Գյուլիզար», «Մամե և Զինե», «Քուրդ կիներ նահապետական ընտանիքում», «Անգրկովկասի բրդերի կենցաղը», «Քրդերին ուղղագրական բառարան» և այլ գեղարվեստական, գրականագիտական գործեր:

Ամինն Ավդալի ստեղծագործություններից շատերը տողորված են ժողովուրդների բարեկամության ջերմ գաղափարով: Նրանցում իր ուրույն տեղն ունի հայ և բուրգ ժողովուրդների բարեկամությունը, որն առանձնապես արտահայտվել է «Կոմիտասին» քանաստեղծությունում:

Հայ և բուրգ ժողովուրդների բարեկամությունը զեղեցիկ կերպով արտահայտվել է նաև նրա «Քաբո» պոեմում: Պոեմի հերոս Քաբոն այն քրդերից է, որը, փրկվելով շարքաշ կյանքից, հանգիստ կյանք է վարում սովետական կարգերում՝ Սովետական Հայաստանում, ու իր հայ բարեկամների հետ պայքարում է հանուն երջանիկ ապագայի: Սակայն Հայրենական պատերազմը ընդհատում է սովետական ժողովրդի խաղաղ շինարար-

րական աշխատանքը: Քաբոն կամավոր մեկնում է ռազմաճակատ՝ ռուս, հայ, վրացի, ադրբեջանցի ժողովուրդների զավակների հետ, մասնակցում է Սովետական Միության հողը թշնամուց մաքրելուն: Քաբոն Սովետական Հայաստանը համարում է իր հայրենիքը, ասում է. «...Թշնամին չպետք է ստք դնի իմ հայրենի հողը»<sup>1</sup>:

Քրդական սովետական գրականության մեջ իրենց արժանի տեղն են զբաղիլ բուրգ գրող Զասմն Զալիլի ստեղծագործությունները: Նրա գրչին են պատկանում «Ալազազ», «Իմ օրերը» բանաստեղծությունների ժողովածուները: Նա կազմել է «Սովետական բուրգ գրողներ» խորագրով մի քանի ժողովածուներ, կատարել է թարգմանությունների ինչպես ռուս, այնպես էլ հայ կրասիկ գրողներից: Նրա գործերի մեծ մասում կարմիր թելի պես անցնում է ժողովուրդների բարեկամության թեման:

Հայ և բուրգ ժողովուրդների լենինյան բարեկամությունը արտացոլվել է բուրգ գրող վազիրե Նադիրի, Զարգոյե Գենչոյի, Ղաչազե Մրադի, Միրոյե Ասադի, Ահմադե Միրազու, Ուսկե Քաբոյի, Աթարե Շառոյի և մյուս բուրգ գրողների ստեղծագործություններում:

<sup>1</sup> Ա. Ավդալ, Առաջին գարունը, Երևան, 1961, էջ 69:

Քուրդ այն աշխատավորները, որոնք ապրում են Սովետական Հայաստանում, իրենց բախտը կապել են հայ ժողովրդի հետ: Հայերեն լեզվի միջոցով քրդերը ոչ միայն ծանոթացել են հայկական, այլ նաև համաշխարհային գրականությունը, այդ պատճառով էլ հայերեն լեզուն հարստացավ ամեն մի քրդի Այո, միայն Սովետական Հայաստանում է, որ այսօր շտանկած բայերով սկսել է զարգանալ քրդական կուլտուրան ու գրականությունը: Ահա ինչու քուրդ երիտասարդ բանաստեղծ Միրայիկի Ռաշիդը «Հայերեն լեզվով» բանաստեղծություն մեջ իր երախտագետ սերն է արտահայտել դեպի հայ ժողովուրդը, հայերեն լեզուն.

*Անբուն գիշերին, կարոտ սիրածիս,  
Անցնում եմ մենակ ընտձ պարտեզով,  
եվ սիրո մի երգ հուզված շարձերես  
Գողցողում է հին հայերեն լեզվով...*

*Թեզևտ ուրիշ է ժայրենի լեզուն՝  
Լացի պես հուզող, շանթի պես կիզուն,  
Բայց հարազատ է քրդական հոգուն  
Արևանման, բորբ հայոց լեզուն:*

Ժողովուրդների ներայրության պաղափարը, հայ և քուրդ ժողովուրդների համատեղ աշխատանքը, նրանց բարեկամական կապերի ամրա-

<sup>1</sup> Մ. Ռաշիդ. Հայերենի համփաներով, Երևան, 1958, էջ 25:

պնդումը, Սովետական Հայաստանում քուրդ ժողովրդի բարեկեցիկ կյանքը պատկերված են նաև քուրդ երիտասարդ գրողներ Սաիդե Իրոյի, Շևոե Հասանի, Սմոյե Շամոյի, Սիմա Սամանդի, Օրդիխանե Ջալիլի, Ֆերիհե Ուսուրի և մյուսների ստեղծագործություններում:

Հայ և քուրդ ժողովուրդների լենինյան բարեկամությունը պարզորոշ կերպով արտահայտվում է նաև այն բանում, որ գրողները թարգմանել ու թարգմանում են հայ գրականության լավագույն նմուշները, գրանով նրանք քուրդ ընթերցողին ծանոթացնում են հայկական կաստիկ գրականություն հետ, հարստացնում և զարգացնում իրենց ազգային մշակույթը: Սա մի անգամ ևս ցույց է տալիս քուրդ ժողովրդի ջերմ համակրանքը հայ ժողովրդի նկատմամբ:

Հայ և քուրդ ժողովուրդների դարավոր բարեկամությունն իր վառ արտահայտությունն է գտել բազմաթիվ հայ գրողների ու բանաստեղծների ըստեղծագործություններում: Շատ հայ գրողներ իրենց ստեղծագործությունների նյութը վերցրել են քրդական բանահյուսություններից և այն մշակելով մատուցել են հայ և քուրդ ընթերցողներին: Նրանք չեն ու հարազատ զգացմունքներով գովերգում են Սովետական Հայաստանի քուրդ ժողովրդի ծաղկող կյանքը, հայ և քուրդ ժողովուրդների սերտ բարեկամությունը:





Քարոյ գրօր հօգին Չօղին հայ անվանի բանաստեղծ Ավետիք Իսահակյանի հետ:

Մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, լավ իմանալով քուրդ ժողովրդի նիսան ու կացը, կենցաղը, հոգեբանությունը, գրանք զեղեցիկ կերպով վերարտադրել է իր գործերում՝ հարազատ մնալով բրդական ոգուն:

Իսահակյանը 1908 թվականին բրդական ժողովրդական բանահյուսության հիման վրա գրել է «Լևլի ու Մեջնուն» պոեմը, «Գյուղացին ու ծիսը» բանաստեղծությունը՝ նա բրդական մտախիհի հիւսիսները նախաձեռնելով «Մի բառ» պատմվածքը, որտեղ սրտատուշ կերպով նկարագրել է քուրդ աշխատավոր մտքի և կյանքի, նրանց ազատասենյ իղձերն ու ցանկությունները: Իսահակյանը շատ բարձր է գնահատել հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը, մի բարեկամություն, որը գալիս է դարերի խորքից, նա հիանում էր Սովետական Հայաստանի քուրդ ազգաբնակչության առաջընթացով: Ահա ինչ է գրում նա «Թյա թագա» թերթի վերահրատարակման կապակցությամբ. «Մանուկ հասակից ես շատ քուրդ բարեկամներ եմ ունեցել և շատ անգամ եմ եղել նրանց մոտ և հյուրասիրվել թե՛ Ալադյաղի շրջանում և թե՛ Շիրակի, նախիջևանի, Տիկորի շրջաններում:

Ես միշտ հետաքրքրվել եմ բրդերի վիճակով: Մեր գյուղի հովիվները՝ Մախսոն և Հըրն, Սուրմալուի Գարադալայի և Փալամուտի գյուղե-

րից էին: նրանք զարնան սկզբներից մինչև աշուն հովվում էին մեր գյուղի ոչխարի հոտերը, աշնանը գնում իրենց ձմեռանոցները, հաջորդ գարնանը նորից գալու համար: Մախտոն հմուտ բլուր նվազող էր, Հչոն՝ երգող (գանգրեժ), նրանք երգում էին իրենց ժողովրդի սրտահույզ երգերը: Ըս սրտով լսում էի նրանց երգն ու նվազը, լսում էի նրանց քրդական հեքիաթներն ու էպիկական ստեղծագործությունները, քրդական ֆոլկլորը, որը տիրել էր իմ մանկությունից մինչև մեր օրերը:

Հոկտեմբերյան ունայնության բուրգ ժողովրդի համար զարթոնքի նոր ուղի բացեց, քրդերն ունեցան իրենց զայրոցները, իրենց նոր գրականությունը: Ինձ շատ ուրախացնում է քրդերի ամեն մի կուլտուրական և տնտեսական նվաճումն ու առաջադիմությունը:

Ըս շատ կցանկանալի, որ քրդերը իրենց մայրենի լեզվով կարողանան ռուսական և ամբողջ աշխարհի գեղեցիկ գրականությունը:

Ըս մաղթում եմ իմ գրչակից բուրգ ընկերներին, որ նրանք լայնորեն օգտագործեն իրենց հարուստ ֆոլկլորը և նրա վրա հիմնեն իրենց նոր գրականությունը՝ ազգերով մե՛ ազգային կոլորիտով և մե՛ համամարդկային-սոցիալիստական բովանդակությամբ:

«Ռյա Քազա»-ի հրատարակության առիթով մաղթում եմ ձեզ տոկունություն և հաջողություն,

մեր եղբայրական բուրգ ժողովրդին մաղթում եմ բարեկեցություն և բախտավորություն<sup>1</sup>:

Իսկ հայ գրականության սովետահայ շրջանի արգեն կլասիկ համարվող Գերենիկ Գեմիբնյանը իր շնորհավորական նամակում՝ ուղղված «Ռյա Քազա» թերթին, այսպես է գրում.

«Հայերս ու քրդերս եղբայր ժողովուրդներ ենք: Մենք միասին ենք ապրել ոչ միայն հարյուր, երկու հարյուր տարի, ապրել ենք հազարավոր տարիներ, ճիշտ է հայերիս ու քրդերիս մեջտեղը թըշնամի է եղել նստած, որ զստնացրել է մեր երկուսի կյանքը, բայց հայ և քուրդ ժողովուրդների սրտի մեջ թշնամություն չի եղել: Մեր մեջ ամեն վատ բան թշնամու ձևերով է եղել, իսկ բարեկամությունը և եղբայրությունը մեր երկուսի ձեռքով: Կա հայ-քրդական հրաժշտություն, հայ-քրդական ֆոլկլոր, հայ-քրդական կենցաղ:

Այսօրվա օրը բուրգ ժողովուրդը հայ պետության մեջ հարազատի նման է ապրում: Քուրդը հայերեն է խոսում, հայ համալսարան է գնում ու ուժի հետևանքով, այլ բոլորովին բնական, ինքնակամ կերպով: Մենք հայերս ուրախ ենք, որ քրդական առաջին դասադիրքը Հայաստանում է գրվել-տպվել, քրդական առաջին թատրոնը, առա-

1 «Ռյա Քազա», № 1, 1955.

չին գպրոցը, լրագիրը Հայաստանում է հիմնադրվել:

Մի քան կա հայի ու քրդի մեջ ընդհանուր, իրար շատ նման՝ բնավորությունը: Հայն էլ է պարզասիրտ եղել, քուրդն էլ: Եվ երկուսն էլ դրա համար շատ են տուժել խորամանկ ու շար ալլ կառավարությունների ձեռքի տակ:

Սովետական Հայաստանում, ուր ժողովուրդների կյանքն ու զարգացումը ազատ պայմանների մեջ է, ապացուցվել է, որ քուրդ ժողովուրդն ունի կուլտուրայի մեծ ձգտում, ունի հոգեկան, մտավոր մեծ ընդունակություն և կարող է շատ արագ զարգանալ: Ինձ միշտ ուրախացրել է քրդական կյանքի ամեն մի հաջողությունը...»<sup>1</sup>:

Սովետահայ գրականության մեջ իրենց ուրույն տեղն են գրավում այնպիսի ստեղծագործություններ, որոնք պատկերավոր կերպով ցույց են տալիս Սովետական Հայաստանում ապրող քուրդ ժողովրդի այսօրվա ծաղկուն կյանքը և երջանիկ ապագան, թե քրդերը այլևս այն քուշվոր, անտուն ու անտեղ խաշնարածները չեն, նրանք կուլտեստային կարգերի շնորհիվ դարձել են նստակյաց, օրեցօր դարգանում է նրանց՝ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան: Իր «Խազալ» պատմվածքում հայ անվանի գրող

<sup>1</sup> «Խյա Թազա» թերթի արխիվ, 1955:



Ապուրանի շրջանի Աչաղյազ գյուղի սովխովի պիւսկտուր Խալան Խուրոս ցուցմանը է տալիս միխանիզատուրին:

Ստեփան Զորյանը ցույց է տալիս վերափոխված քրդուհուն, վերափոխված քրդական գյուղը, որը դարձել է մի գեղեցիկ բնակավայր, նա ցույց է տալիս վերափոխված քրդական ընտանիքը<sup>1</sup>:

Հայ և քուրդ ժողովուրդների լեռնինյան խակահան բարեկամությունը գեղեցիկ կերպով դրսևորվել է նաև հայ նշանավոր գրող Հրաչյա Քոչարի ստեղծագործություններում: Անվանի գրողը միշտ հետաքրքրվում է քուրդ ժողովրդի կուլտուրայով և գրականությանը, աշակցում է նրա նորաստեղծ կուլտուրայի և գրականության բարգավաճմանը: Հրաչյա Քոչարը գրել է բազմաթիվ գործեր Սովետական Հայաստանում ապրող քրդերի կյանքի մասին: Նրա «Խաջե» պատմվածքում պատկերված է քուրդ քոչվորի կյանքը և նկարագրված է, թե ինչպես նա հրաժարվում է քոչվորական կյանքից, գտնուում է նստակյաց, կապվում հողի հետ: Այստեղ տեսչ ենք քոչվորմ ինտերնացիոնալ դաստիարակության բազմաթիվ հարցեր, նկարագրվում, թե ինչպես մի հայ կրթված երիտասարդ կուլտուր-լուսավորական մեծ աշխատանք է տանում քոչվոր քրդերի մեջ, օգնում քուրդ բարեկամներին: Փոչարը, բարձր գնահատելով հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը, ասում է. «Այո, մենք հայերս ու քրդերը միասին եկել ենք դարերի

խորքից: Եվ գառն անցյալի փորձից սփափված, զգաստացած ու իմաստուն, կզնտնք դեպի գալիք դարերի խորքերը, դեպի ապագայի գեղեցիկ խորքերը...»<sup>2</sup>:

Սովետահայ պեղիայի նշանավոր դեմքերից մեկը՝ Սարմենը, իր բազմաթիվ ստեղծագործություններում գովերգում է Սովետական Հայաստանի քրդերի երջանիկ, լուսավոր կյանքը, հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը: Իր «Լաթիֆե» պոեմում պատկերված է խավարից և հետամաշցությունից դուրս եկած մի քրդուհու կյանքը, որը սովետական կարգերում գարձել է իր իրավունքների տերը, որի առջև բաց մե ուսումնական բուրք օջախների գոնիքը: Լաթիֆեն դարձել է ճարտարապետ և իր հայ բարեկամների հետ բնրդական նոր գյուղի հատակագիծն է գծում:

Սարմենը, կրկար տարիներ ապրելով Արևալուսյան Հայաստանում բնակվող քրդերի մեջ, շատ լավ ծանոթ է քրդական բնահայտություններ, նրա լեզունդներին ու ավանդություններին: Նա քրդական ժողովրդական «Մամե ու Աշե» վիպերգի հիման վրա գրել է «Սպանված սերը» պոեմը, որի մեջ վարպետորեն պատկերված է քուրդական տի-

<sup>1</sup> Տե՛ս «Հայաստանի աշխատավորուհի», № 8, 1960.

<sup>2</sup> «Երևան», բուլղարահայ կուլտուրական միության վարչության օրգան, 1957, ապրիլ, № 5—12:

բապետութիւնն տակ գտնվող քուրդ ժողովրդի շարքաշ կյանքը:

Քուրդ ժողովրդի նիսա ու կացի, բարքերի, վերափոխված կյանքի մասին են զրեղ նաև Հմ. Սիրասը, Ս. Տարոնցին, Վ. Գրիգորյանը, Հ. Շիրազը, Վ. Կարենցը և ուրիշներ:

Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամութունը գնուով այնքան է ամրապնդվում, և նրա նշանակությունն այնքան այժմեական է դառնում, որ այն իր ուրույն տեղն է գտնւ նաև սփյուռքահայ պրոպրետիվ գրողների լավագույն գործերում: Նրանք հատկապես զբաղվել են քրդական ժողովրդական բանահյուսութիւնն լավագույն նմուշների մշակմամբ:

Ամերիկահայ պրոպրետիվ գրող Կարապետ Սիրասը սերտորեն կապված է կղզի քուրդ ժողովրդի հետ, զբաղվել նրա բանահյուսութիւնն հավաքագրմամբ, մշակմամբ, նա միշտ բարձր է գնահատել հայ և քուրդ ժողովուրդների բարեկամութունը:

1954 թվականին Ամերիկայի Ֆիլադելֆիա քաղաքում Կարապետ Սիրասը տպագրում է իր «Հովիվ Աղոն» հովիվբզական ծավալուն պոեմը, որի նյութը վերցված է քրդական ժողովրդական բանահյուսութունից: Այստեղ հիմնականում նկարագրված է քուրդ գյուղացու պայքարը կեղեքիչների՝ անդաների ու բեղերի դեմ, որը հետագայում վեր է

ածվում մի խոշոր ապստամբութիւն: Ահա ինչ է ստում Կարապետ Սիրասը իր այս պոեմի նախաբանում.

«Հովիվ Աղոն առանձին մի տեղ է գրավում իմ գրական երկերի շարքում թե իր հղացման և թե իր կառուցվածքի տեսակետից»:

Բացի այդ, 1951 թվականին ամերիկահայ «Առաջադիմական» հրատարակութեամբ լույս տեսավ Կ. Սիրասի մշակած սիրավեպը՝ «Մամ ու Ջին», իսկ 1957 թվականին Երևանում այն վերահրատարակվեց ավելի մշակված ձևով նրա «Գյուլցաղնական» ծավալուն ժողովածուում:

Սակայն զրանցով չեն ավարտվում քրդական կյանքին վերաբերող Սիրասի ստեղծագործութիւնները: Նա իր մյուս ստեղծագործութիւններում գեղեցիկ կերպով օգտագործում է քրդական բանահյուսութիւնն նմուշները, ցույց տալիս հայ և քուրդ ժողովուրդների բարեկամութիւնը, նրանց համատեղ պայքարը ներքին և արտաքին թշնամիների դեմ: Այդ հատկապես լավ է արտացոլված նրա «Կաշտի բաշեր» և «Գյուղն իմ հեռավոր» պոեմներում:

Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամութիւնն թեմային անդրադարձել է նաև Ֆրանսահայ գրող

1 Սիրաս, Հովիվ Աղոն, Ֆիլադելֆիա, 1954, էջ 1-3:  
2 Տե՛ս Կ. Սիրաս, Գյուլցաղնական, Երևան, 1957, էջ 433:

Առն Մեսրոպը: Նա իր «Քուրդիստան և բրդեր» գրքում հանգամանորեն անդրադառնում է բուրգ ժողովրդի անցյալին, ցույց տալիս հայ և բուրգ ժողովուրդների հերոսական պայքարը Կարբին ու արտաքին թշնամիների դեմ, պատկերել է Սովետական Հայաստանում ապրող բուրգ ժողովրդի մի փոքրաթիվ մասի ծաղկուն նոր կյանքը<sup>1</sup>:

Հայ և բուրգ ժողովուրդների բարեկամության վառ արտահայտություններից են հեռավոր Կիպրոսի Մելիթոնյան հաստատության ուսուցիչ, բանասեր Նշան Հովհաննիսյանի կատարած գրական և բանասիրական մշակումները, որոնցում գեղեցիկ ու սրտառուլ սողերով ցույց են տրված բուրգ ժողովրդի նփսռ ու կաջը, նրա դառն ու անհրապույր կյանքը Մերձավոր արևելքի երկրներում:

Հովհաննիսյանը շրջել է Մերձավոր արևելքի գրեթե բոլոր երկրներում, երկար տարիներ զբաղվել է քրդական ժողովրդական բանահյուսության հավաքմամբ ու մշակմամբ: Նրան հաջողվել է գտնել «Բերիվան» և «Յալզո» քրդական ժողովրդական պոեմների լրիվ տեքստերը...<sup>2</sup>,

Հովհաննիսյանը, վերադառնալով իր հայրենի երկիրը՝ Սովետական Հայաստան, իր հետ բերեց

բուրգ ժողովրդի բանահյուսության լավագույն կտորներ և նվիրեց այստեղ բնակվող բուրգ ժողովրդին:



Հայաստանում սովետական կարգերի հաստատմամբ հիմք դրվեց նաև բուրգ ժողովրդի արվեստի և երաժշտության զարգացմանը: Քրդական գյուղերում կազմակերպվեցին թատերական, երաժշտական ինքնագործ խմբեր, որոնք հիմնականում ղեկավարում էին հայ փորձված արվեստագետներ: Ինքնագործ խմբերում առաջատար տեղ էր հատկացվում սովետական թեմատիկային, հիմնականում նաց կենցաղի դեմ մղվող պայքարին: Այդ խմբերը հիմք հանդիսացան 1937 թվականին Ալազյազի շրջանում հիմնելու շրջիկ քրդական պետական թատրոն: Կարճ ժամանակամիջոցում թատրոնի շուրջն են համախմբվում 14 բուրգ շնորհալի երիտասարդներ: Թատրոնի զեղարվեստական աշխատանքները ղեկավարելու համար արվեստի գործերի վարչությունը մշտական աշխատանքի է ուղարկում ռեսպուբլիկայի վաստակավոր դերասան Մ. Զաննինին<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Լ.Մեսրոպ, Քուրդիստան և բրդեր, Փարիզ, 1957:

<sup>2</sup> «Սովետական Հայաստան» № 237, 1962:

1 «Коммунист», Ереван, 1937, № 210.



Մի տեսարան «Մամ և Զինե» պիեսից, որը բեմադրվել է 1945 թ. Ալեքսյանի Բեյալյան պետական բառարանում: Գլխավոր դերերում՝ ամուսիններ Բաբե և Մանե և երեխան Ալվալյանը:

Քրդական նորաստեղծ թատերական կոլեկտիվին զգալի օգնություն է ցույց տալիս Գ. Սունդուկյանի անվան պետական թատրոնը:

Այս թատրոնը լուրջ աշխատանք կատարեց ոչ միայն Հայաստանում բնակվող քուրդ աշխատավորության, այլ նաև Անդրկովկասի քուրդ ազգաբնակչության շրջանում:

Այժմ քրդական մի շարք գյուղերում կուլտուրայի տներին ու ակումբներին կից գործում են բազմաթիվ թատերական, երգի-պարի ինքնագործ խմբակներ: Գրանցիցից աչքի են ընկնում Ապարանի շրջանի Ալադյազ գյուղի և Թալինի շրջանի Սուրիկ և Հակոբ գյուղերի ակումբներին կից ինքնագործ խմբակները:

Եթե նախառնույունիցին շրջանում խավարի մեջ խարխափող քուրդ գյուղացին չէր կարող գաղափար ունենալ արվեստի մասին, ապա այսօր նրա որդիներից շատերը հանդես են գալիս որպես շրջանորհյալի արվեստագետներ և վայելում են ժողովրդի ջերմ սերն ու համակրանքը: Հայկական ՍՍՌ կրկեսի կոլեկտիվի անդամ քրդուհի Նազե Շիրայր Միսիսյան կրկեսներում ազգային հնչեղ երաժշտության տակ ցուցադրում է իր արվեստի լավագույն նմուշները (ժոնգլյոր): Նա արժանացել է Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստի պատվավոք կոչման և բազմիցս պարգևատրվել

է Հայկական ՍՍՌ Գերազույն սովետի պատվոգրերով:

Երևանի գեղարվեստական-Ֆատերահան ինտերտուսի ունիտարական Ֆակուլտետն է ավարտել Վալոդե Խուդոն: Նուրա Զավահրին և Զամիրա Զախրը սովորում են Երևանի պետական կոնսերվատորիայում:

Քրդական ժողովրդական երգերը և պարեղանակները տարբեր ժամանակներում գրի են առել ու մշակման ենթարկել աշուղ Ջիվանին, ԿարաՄուրզան, Նիկողայոս Տիգրանյանը և շատ ուրիշներ:

Քուրդ ժողովրդի հոգևոր կուլտուրայի բաղկացուցիչ մասը կազմող երաժշտական ֆոնդը պատմական, գիտական և գեղարվեստական խոշոր արժեք է ներկայացնում, և հենց այդ է պատճառը, որ տարբեր ժամանակներում հայ երաժշտութիւնի ակադեմիայի ներկայացուցիչներ մի զգալի մասը ստեղծագործական հետաքրքրություն է հանդես բերել դեպի քրդական ժողովրդական երաժշտությունը:

Երևանում 1931 թվականին բացված քրդական մանկավարժական տեխնիկումին կից կազմակերպվում է երգեցիկ խումբ և միևնույն ժամանակ մայրենի լեզվով դասավանդվում է երաժշտություն: Այդ խումբը ղեկավարում էր երաժշտադետ Գեղամ Գասպարյանը: Այստեղ երաժշտութիւնը դասավանդումը և խմբակի կազմակերպումը մե-

ծապես նպաստեց քուրդ հասարակության մեջ երաժշտական կուլտուրայի տարածմանը<sup>1</sup>:

Տեխնիկումում և գլխորդներում քրդական երաժշտութիւնը դասավանդման համար կարիք էր զգացվում երաժշտական ձեռնարկի, և այդ նշուրհակայ գործին ձեռնամուխ եղավ Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ Սամսոն Գասպարյանը, որը կազմեց քրդական երգերի ժողովածու: Այդ ժողովածուն հրատարակվեց 1932 թվականին Այնտեղ ղեկավարած են «Ինտերնացիոնալը», «Հոկտեմբերիկի երգը», «Մուրճն ու մանգազը», «Կոլխուզը» և այլ երգեր:

1936 թվականին Հայպետհրատը հրատարակում է քրդական ժողովրդական երգերի ժողովածու, որը գրի է լին առել Հ. Զնգին և Կարո Զաբարյանը: Ժողովածուում ղեկավարած են սիրային, հերոսական, պարային երգեր: Իսկ 1936 թվականին Ս. Գասպարյանը հրատարակում է բառամայն խմբի համար մշակված «Լույս» և «Քաշառ» քրդական ժողովրդական երգերը: 1961 թվականին նա հավաքում է Կոմիտասի մշակած մի քանի քրդական ժողովրդական երգեր և դետեղում «Կոմիտաս» խորագրով արժեքավոր գրքում:

Այս երգերի՝ նուաներով լույս ընծայումը կուլտուրական և գեղարվեստական խոշոր նշա-

<sup>1</sup> Տե՛ս «Մյա Քազա», N 87, 1960.



նակութիւնն ունեցալ քուրդ աշխատավորութիւնն  
գեղարվեստական դաստիարակութիւնն գործում:

Սովետական Հայաստանում տարբեր ժամանակներում պարբերաբար կազմակերպվել են արշավախմբեր, որոնք գրի են առել և ձայնապնակների վրա ձայնագրել հարյուրավոր քրդական ժողովրդական երգեր ու պարեղանակներ: Դրանք հետագայում հրատարակվել են առանձին ժողովածուներով: Դրանց թվին են պատկանում Սպիրիդոն Մելիքյանի, Կարո Զարարյանի, Արամ Քոչարյանի, Քրիստափոր Քուշնարյանի գրի առած քրդական երաժշտական ֆոնդորի լավագոյն նմուշները, թվով 400—500 երգ: Մելիքյանի և Զարարյանի ժողովածուներն արդեն վաղուց լույս են տեսել: Սովետահայ ականավոր կոմպոզիտոր Արամ Նաչատրյանն իր «Գայանն» ջաշետում և Մարտին Մազմանյանն իր «Մամն ու Աշն» սիմֆոնիկ պեմանո թրդական ժողովրդական երաժշտութիւն լավագոյն նմուշներն օգտագործելով՝ կերտել են լայն կտաճի լիարժեք գործեր: Քրդական ժողովրդական պարերգերի մշակման գործում մեծ աշխատանք է կատարել Սրբուհի Լիսիցյանը:

Քրդական ժողովրդական երաժշտութիւնն հավաքման և ձայնագրման ուղղութիւնով բերելն տարիներս շնորհակալ աշխատանք է կատարել Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի ռադիոյի և հե-

ռուսատառնութիւնն քրդական հաղորդումների խմբագրութիւնը: Այս գործում խմբագրութիւնը պալի օգնութիւն է ցույց տվել ռադիոկոմիտեի ժողովրդական գործիքների անսամբլը՝ Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ Արամ Մերանդուլյանի ղեկավարութեամբ:

Քրդական երաժշտական կուլտուրան հարստացալ նաև երկու այլ աշխատութեամբ: 1960 թվականին Հայպետհրատը հրատարակեց Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ռականոգուհիներ Նուրա Զալահիբի ձայնագրած քրդական 33 պարերգերի ժողովածուն՝ տեքստերով հանդերձ, իսկ 1964 թ. Զամիլա Զալիլի «Քրդական ժողովրդական երգեր»: Սա քուրդ ժողովրդի կուլտուրայի պատմութիւնն մեջ նոր էջ է: Առաջին անգամ քրդուհին զբաղվում է իր ազգային երաժշտութիւնն մշակմամբ և միևնույն ժամանակ հույս է ներշնչում, որ քուրդ ժողովուրդը մոտ ապագայում կունենա երաժշտական բարձրագոյն կրթութիւնն ստացած երիտասարդ մասնագետ:



Նախասովետական շրջանի քուրդ կիներ տուր-  
ժախի առարկա էր և իրավունք չունէր աշխատանքի դուրս գալու, զրկված էր մարդկային իրավունք-

ներից: Իսկ այսօր նրա տասնյակ ներկայացուցիչները սովորում են Մովսեսական Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում: Քրդուհին իրավունք ստացավ ընտրելու և ընտրվելու մեր Միության անդամական և բարձրագույն օրգաններում, աշխատելու պետական և պարտիական ապարատում: Ոչ մի կերպ չի կարելի մոռանալ գլուղի վերակառուցման առաջին շրջանում, ծանր ու դժվարին այդ օրերում, բերդուհի նուրի Պոլատովայի, Հենինտկան դավաճի Հաջիխալիլի գյուղատվետի նախագահ Սուսիկա Խուրչի և մյուսների կատարած աշխատանքը:

Նուրի Պոլատովան 1921 թվականից աշխատում էր ՀԿՊ Կենտկոմի կանանց բաժնում որպես հրահանգիչ: Նա այդ տարիներին լայն բազաբանական-մասնաբանական աշխատանք է տարել բուրգ կանանց մեջ, եղել է քրդական բուրգ գյուղերում, անց է կացրել կանանց խորհրդակցություններ, կոչ արել պայքարելու հետամնաց, վնասակար սովորությունների՝ դայանի, երկկնուսթյան դեմ:

ՍՄԿՊ անդամ Սուսիկա Խուրչն գյուղում բուրգ կանանց մեջ լայն կազմակերպչական աշխատանք է տանում: 1929 թվականին նա ընտրվում է Հայաստանի սովետների վեցերորդ համագումարի պատգամավոր և բովանդակալից ելույթով հանդես է գալիս համագումարում: Ահա ինչ է տեսում նա իր ելույթում.

«Ուրախությունից չեմ զանում խոսքեր, արտահայտելու այն բողոքը, ինչ կատարվում է սրտումս: Ես զգում եմ ինձ այստեղ ինչպես իմ տանը, հավասար եմ այստեղ ներկա դանիդղների հետ և այդ զգում եմ ոչ միայն ես, այլև այն տասնյակ բուրգ աշխատավոր պատգամավորները, որոնք ներկա են համագումարին:

Մեր գյուղն արդեն ստացել է խմելու ջուր, աշխատելով քրդուհիներին մի քանի կիլոմետր հեռավորությամբ իրենց ուսերի վրա ջուր կրելուց: Մենք դարձել ենք նստակյաց և սկսում ենք վարել կուլտուրական կյանք: Մեր աղջիկներն ամուսնանում են իրենց կամքով, և շկա դայանը, որը սղի և արցունքի աղբյուր էր հանդիսանում: Եվ այդ բոլոր մենք պարտական ենք խորհրդային իշխանությանը: Ես հանում եմ իմ դիտի փաթաթանչ, որ քրդուհիները դարերով գործ են անել, որը կաշկանդում է իմ միտքը, իմ կամքը»:

Սովետական Հայաստանում քրդուհին հաճախեց դպրոց, ընդունվեց բարձրագույն ուսումնական հաստատություն, աշխատեց սովետական հիմնարկ-ձեռնարկություններում: Քրդուհի Ֆրիշա Ջավահրին ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը և այժմ աշխատում է որպես բժշկուհի, նրա բույրը՝ Ֆրիշա Ջավահրին, ավարտել է Մոսկվայի

1 «Խորհրդային Հայաստան», N 62, 1929:

Վ. Ի. Լենինի անվան մանկավարժական ինստիտուտը և այժմ Երևանում աշխատում է որպես մանկավարժ: Երևանի պետական համալսարանն էն ավարտել Սիմա Սամանդր, Նադա Ռաոն և մյուսները: Քուրդ ժողովրդի պատմության մեջ առաջին անգամ քրդուհին հանդես եկավ իր գեղարվեստական ստեղծագործություններով: Գա Սիմա Սամանդն է: 1961 թվականին Հայպետհրատը հրատարակեց նրա պատմվածքների ժողովածուն՝ «Եսագար» խորագրով: Քրդուհին ստեղծագործական գրչով պատկերել է քուրդ կնոջ դասն անցյալը, նրա իրավագուրի և անբովանդակ կյանքը, նրա սգեղունչ այսօրը և երջանիկ ապագան:

Ժողովուրդների բարեկամության թեմայով է գրված Սիմա Սամանդի «Քարի գործ» պատմվածքը: Առաջին համաշխարհային պատերազմի ծանր տարիներին Վան քաղաքում ապրող անօթեվան և սոված քուրդ ընտանիքին իր տունն է հրավիրում հայ Շուշան տատիկը և կերակրում մի քանի օր: Ապա այդ նույն տատիկի միջնորդությամբ սուսական գեներալներից մեկը կազմակերպում է քուրդ ընտանիքի գաղթը Արևելյան Հայաստան: Այժմ Սիմա Սամանդն աշխատում է «Քարեկամներ» վիպակի վրա, որի թեման նույնպես ժողովուրդների լենինյան ազգային քաղաքականությունն է:

Այժմ Երևանի տարրեր ուսումնական հաստատ



Հայ համալսարանական Սիմա Սամանդի և Կարո Սամանդի արձակուրդի ժամանակ: Սիմա Սամանդի և Կարո Սամանդի արձակուրդի ժամանակ:

տովելուններում սովորում են տասնյակ քրդուհի-  
ներ:

Սովետական Հայաստանում հրատարակվող  
«Ռյա Քազա» թերթը քուրդ աշխատավորության  
չբջանում լայն ազիտացիոն-մասսայական աշխա-  
տանք է տանում: Նա մորթիլիզացնում է աշխա-  
տավորության ուժերը պարտիայի և կառա-  
վարության որոշումները կենսագործելու ուղղու-  
թյամբ: Նա մեծ դեր է խաղացել և այժմ էլ խա-  
զում է քուրդ գրականության, լիզվի և կուլտուրա-  
լի զարգացման ու մասսայականացման գործում:

Թերթի լավ տրագիցիաներից մեկն այն է, որ  
նա լայն տեղ է տալիս ժողովուրդների բարեկա-  
մության հարցին, նրա էջերում մշտապես արտա-  
ցվել են հայ և քուրդ ժողովուրդների բարեկա-  
մության հարցերը:

Այժմ Ապարանի շրջանի Այազյազ գյուղում  
հասարակական հիմնադրերով գործում է աշ-  
խարհում առաջին քրդական ժողովրդական հա-  
մալարանը:

Կոմունիստական պարտիայի և սովետական  
կառավարության հողատարության շնորհիվ Սո-  
վետական Հայաստանում աճեցին լավ աշխատող  
քուրդ կազմեր, որոնցից լավագույններն ընտրվել  
են տեղական և Քերազույն սովետների ղեպու-  
տաները: Սովետական Միության հերոս Սամանգ  
Սիբարանդովը աշխատում է ՀՍՍՌ գյուղատնտեսա-

կան մթերքների արտադրության և մթերումների  
մինիստրոսթյունում որպես կազմերի վարչության  
պետ: Նա երեք անգամ ընտրվել է ՍՍՌ-ի Գերա-  
զույն սովետի ղեպուտատ և այժմ էլ ՀՍՍՌ Գերա-  
զույն սովետի ղեպուտատ է: Բացի պարտիական  
և սովետական օրդաններում պատասխանատու  
աշխատանք կատարելուց, Սիբարանդովը լուրջ աշ-  
խատանք է կատարում քրդական սովետական զը-  
րականության զարգացման գործում: 1957 թվա-  
կանին Հայրենահրատը լույս ընծայեց նրա և Արա-  
մե Չալանի «Հայ-քրդերեն բառարանը»-ը, իսկ  
1960 թվականին՝ «Խաչի և Սիբարանդ» նրա ծավա-  
լուն պոեմը: 1962 թվականին նույն պոեմը հրա-  
տարակվում է հայերեն լիզվով՝ բանատեղծ Կա-  
րենցի թարգմանությամբ:

«Ռյա Քազա» թերթի խմբագիրն է Միրոյն  
Ասադը, որը Հայաստանի կոմպարտիայի XXIII  
համագումարում ընտրվեց ՀԿՊ Կենտկոմի ան-  
դամ: Նա շնորհալի գրող է, 1961 թվականին քրդ-  
դերեն լիզվով հրատարակվեց «Սիսե» խորագրով  
նրա պատմվածքների ժողովածուն: Պատմվածք-  
ներում հեղինակը անզրադառնում է քուրդ ժող-  
վրդի տառերնալի, կուլտնտեսային աշխատանքի,  
հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության հար-  
ցերին<sup>1</sup>: Ն. Խ. Մախմուդովը Հայկական ՍՍՌ ավ-

<sup>1</sup> М. Ход, Сусе, Ереван, 1962.

տոտրանսպորտի մինիստրի տեղակալ է, նա նույնպես մի քանի անգամ ընտրվել է ՍՍՌՄ և Հայկական ՍՍՌ Գերադույն սովետի ղեկավարատու Հայկական ՍՍՌ կապի մինիստրության էլեկտրական սարքավորումների վարչության պետն է նաև Ավգալյանը, և այսպես շատ ուրիշներ, որոնք աշխատում են պարտիական և սովետական օրգաններում:

Այսօր քուրդ ժողովուրդը հպարտությամբ է հիշում քաղաքացիական պատերազմում զոհված, կենտրոնական Սիրիոյի վարչության կոմիսար, ականավոր կոմունիստ-ռեուլյուցիոններ, քուրդ տաղանդավոր պոետ Ֆերիկ (Ֆյոդր) Պլատրեկովին, որը հեռավոր Սիրիոյում անձնվիրաբար պայքարում էր ինտերվենաների դեմ՝ նոր կարգերի հաստատման համար<sup>1</sup>:

Ինչպես քուրդ, այնպես էլ հայ ժողովուրդները երբևէ չեն մոռանա քուրդ անձնվեր ռեուլյուցիոններ Օջախկալում, որը հերոսաբար պայքարում էր Ադրբեջանում և Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար:

Այսպես Սովետական Հայաստանում ծաղկում է քուրդ ժողովրդի կյանքը, ավելի կուռ է դառնում հայ և քուրդ ժողովուրդների լենինյան բարեկամությունը:



Ապարանի շջանի Ալագյալ գյուղի նիվանոցի գլխավորի թիշի Անայի Շամոն Բնում է Լեւիսային:

<sup>1</sup> Տե՛ս В. Рябиков, Федор Литвин, Новосибирск, 1950.

1961 թվականին քուրդ ժողովուրդը հայ ժողովրդի հետ միասին շերմորեն տոնեց Սովետական Հայաստանի քառասնամյակը: Չէ՞ որ այդ տոներն և իրենց տոնն էր, չէ՞ որ Սովետական Հայաստանում է քուրդ ժողովուրդը ձևեր բերել այն բոլորը, ինչ մենք համոզուածակի շարագրեցինք մեր այս աշխատութեան մեջ, չէ՞ որ Հայաստանում հիմք դրվեց քուրդ ժողովրդի ազգային կուլտուրային: Այո, Սովետական Հայաստանում քուրդ ժողովրդի այս առաջընթացը հայ և քուրդ ժողովուրդների բարեկամութեան լավագույն ապացույցներէջ մեկն է: Գրող Հաջիե Ջնդին իր «Հայաստանին» բանաստեղծութեան մեջ՝ ահա այսպես է փառաբանում Սովետական Հայաստանը.

*Քառասուն գարուն, քառասուն ձմեռ  
Իրար հետեից եկան ու անցան,  
Գու եզրայրական քնտենիբում մեծ  
Գանգեկն ևս հիմա հզոր ու պայծառ:*

Իսկ քուրդ նշանավոր բանասեր Ահմեդ Քոֆիկ Ուրդին Իրաքում հրատարակեց «Միաբանդ և Խաչեզարիի պատմութունը» խորագրով մի գրքույկ, որի մեջ զետեղված է նրա կողմից թարգմանված

<sup>1</sup> «Սովետական Հայաստանի 40 տարին», Երևան, 1961, էջ 225:

Հովհաննես Եփրազի «Միամանթն և Խաչեզարն» պոեմը և Վրթանես Փափազյանի «Լուր-դալուր»-ը: Այս գրքույկը հեղինակը նվիրել է Սովետական Հայաստանի 40-ամյակին: Նախաբանում խոսվում է հայ և Սովետական Հայաստանում ապրող քուրդ ժողովուրդների շերմ բարեկամական կապերի մասին: Ուրդին ասում է. «Միայն Սովետական Հայաստանում է բոլոր հնարավորութուններն ստեղծված քուրդ ժողովրդի ժողովուրդ կուլտուրայի համար»: Քոֆիկ Ուրդին նշում է, որ շուտով պետք է քրդերեն թարգմանի ևս. Արովյանի այն ուսումնասիրութունները, որոնք վերաբերում են քուրդ ժողովրդին:

Սովետական Հայաստանում ապրող քուրդ ժողովուրդը հայ ժողովրդի հետ միասին 1962 թվականի մայիս ամսին բարեկամութեան մեծ խինդով տոնեց հայ ժողովրդի հանճարեղ զավակի, հայկական գրերի ստեղծող ու դարութեան հիմնադիր, խոշորագույն գիտնական Մեսրոպ Մաշտոցի 1600-ամյակը, որն իրոք վերածվեց համաժողովրդական տոնի: Բազմաթիվ քուրդ գրողներ, բանաստեղծներ, գիտնականներ, գրողականագետներ այդ օրերին սեպուլքիական թերթերում և ամսագրերում հանդես եկան իրենց պիտական հոդվածներով ու գրական գործերով, ցույց տվեցին մեսրոպյան տատերի դերը քուրդ ժողովրդի կուլտուրայի ձևավորման և պարզացման գործում:

Մաշտոցը հարազատ է ամեն մի քրդի սրտին, և այդ է պատճառը, որ նրանք երգում, փառաբանում են նրա ստեղծած կուլտուրան: Քուրդը կրիտասարգ զրոզ Միքայելի Ռաշիդը իր «Մեարոպ Մաշտոցին» բանաստեղծության մեջ ասում է.

Քո տառերով եմ տառին անգամ  
Դասերս սերունչ, անունս գրել,  
Գրել անունս, որ ապրում եմ, կամ,  
Որ հայ գգրություն հետքերն եմ կրել<sup>1</sup>:

1963 թվականին հոկտեմբերի 27-ին անդրկովկասյան ժողովուրդների բարեկամության ու եղբայրության իսկական տոնի վերածվեց հանճարեղ բանաստեղծ, հումանիստ, ժողովուրդների անմահ երգիչ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը: Սայաթ-Նովան մարմնացնում է անդրկովկասյան եղբայրական ժողովուրդների դայաժոբ բարեկամությունը: Բանաստեղծը՝ գաղափարափոսն, բազաբական, բարոյական հսկայական զեր է խաղացել ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում:

Անմահ երգիչը հարազատ ու սիրելի է նաև բուրդ ժողովրդի համար:

Տոնական օրերին, ինչպես «Ռյա Քաղա» թեր-

թում, այնպես էլ քրդական ռադիոհաղորդումներում, իրենց չեմ խոսքերով հանդես եկան բուրդ զրոզներ ու բանաստեղծներ, ինտելիգենցիայի ներկայացուցիչներ: Քուրդն իր մայրենի լեզվով ստեղծագործեց և երգեց մեծ բանաստեղծին: Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստրության կողմից անցկացված երկու մրցանակաբաշխություններում, որոնք նվիրված էին ժողովուրդների բարեկամության մեծ երգչի ծննդյան 250-ամյակին, հանդես եկան նաև բուրդ ժողովրդի ներկայացուցիչները:

Սայաթ-Նովայի երգերի լավագույն կատարման մրցանակաբաշխությունում հանդես եկան պրոֆեսիոնալ և ինքնուս 35 երգիչներ, ուր քրդուհի Սուսիկա Մսոն քրդերեն լեզվով երգեց Սայաթ-Նովայի երգերը և արժանացավ Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստրության պատվոգրի: Իսկ Սայաթ-Նովայի բանաստեղծությունների լավագույն աստուծոթողների մրցանակաբաշխությունում բուրդ երիտասարդ բանաստեղծ Ֆերիկե Ուսուրը արժանացավ երրորդ կարգի մրցանակի:

Հորեյանական օրերին Հայպետհրատը հրատարակեց մեծ երգչի բանաստեղծություններից քրդերեն թարգմանությամբ մի առանձին ժողովածու: Բանաստեղծությունները թարգմանել են Հ. Զնդին և Ֆերիկե Ուսուրը: Ժողովածուն խմբագրել և ընդարձակ առաջաբանով հանդես է եկել Հայ-

<sup>1</sup> «Ռյա Քաղա», 46, 1962:

կական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի թղթափայտ անդամ Մ. Հասարաթյանը:

Սովետական Հայաստանում քուրդ աշխատավորության համար քրդերեն լեզվով տրվում են ամենօրյա ուսդիտակազմումները: Այդ հաղորդումների միջոցով պարտիայի և կուսավարության որոշումները, օրվա նորությունները լայնատարած ալիքների միջոցով հասնում են քուրդ աշխատավորին: Քրդական ուսդիտակազմումների խմբազույթությունը ամեն օր հայ և քուրդ աշխատավորներից ստանում է տասնյակ թղթակցություններ: Քրդական ուսդիտակազմումներին են ունենցում անդրկովկասյան բոլոր ռեսպուբլիկաների քուրդ աշխատավորները և թղթակցում նրան: Քրդական հաղորդումները չենք արձագանք են դոնել արտասահմանի հայ և քուրդ աշխատավորների մեջ, ներքոնք խմբագրությունն ուղարկած նամակներում շնորհակալություն են հայտնում սովետական պետությանը, Հայաստանի կուսավարությանը՝ այդ բովանդակային ու հետաքրքիր հաղորդումների համար:

Իսկ արտասահմանում գտնվող հայ և քուրդ աշխատավորներն ու նրանց պրոգրեսիվ կազմակերպությունները միշտ էլ ողջունել են հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը, պայքարել ու պայքարում են այդ բարեկամություն ամրապնդման համար:

Երբ 1958 թվականի հուլիսի 14-ին Իրաքում հաղթանակեց ռեյուցիան, արարների և քրդերի հետ այդ հաղթանակը չեմոքրեն ողջունեցին Իրաքի հայերը: Զէ՞ որ նրանք բազմիցս միասնական ճակատով հանդես են եկել իմպերիալիստական պետությունների ոտնձգությունների և երկրի ներքին ռեպրեսիոն ուժերի դեմ: Ահա այդ մասին ինչ է գրում «Մեր նշանաբանն է Ցառաջ» թերթի Բաղդադի թղթակցը. «Ազգամիջյան թշնամությունները և ազգային երկպառակությունները միշտ այ հրահրված են իմպերիալիզմին կողմն, երկարաձգելու համար իր տիրապետությունը և արդենչու համար ազգային ազատագրական առաջընթացը: Ահա թե ինչու իրաքյի ժողովրդին ազատագրումը իր հետ բերավ նաև արաբ-քուրդ բարեկամության ամրապնդումը և ազգային միասնությունը բոլոր բաղաբացիների մեջ անխտիր: Ահա թե ինչպես ազատության մեջ եղբայրացան արաբ, քուրդ և հայ քաղաքացիները...»<sup>1</sup>:

1958 թվականի հոկտեմբերի 19-ին Իրաքի հայ երիտասարդական ընկերությունը ի պատիվ դեմոկրատական երիտասարդական միջազգային միություն ընդհանուր բարոտար վարները կամբրոսի, Բաղդադի էմիրատի ճաշարում թեյասեղան է կազմակերպում: Այդ երեկույթին ներկա էին

1 «Մեր նշանաբանն է Ցառաջ», 1958, նոյեմբերի 2:



ինչպես արար, այնպես էլ բուրդ զեմտկրատ գործիչները: Արարեիք լեզվով ողջունի խոսքով հանդես է գալիս նորարար Պեյլերյանը: Նա իր ողջունյի խոսքում կանգ է առնում արար, բուրդ և հայ ժողովուրդների բարեկամություն, այդ բարեկամության հետագա ամրապնդման վրա: Նա ասում է «Մեր զխաղժոր նպատակներն մինը ըլլավ զարգացնելու հայ-արար և բուրդ երիտասարդներու բարեկամությունը...»<sup>1</sup>:

Իսկ Իրաքի հայ երիտասարդական բնկերության հիմնադիր մարմնի հրապարակած կոչում, որն ուղղված էր իրաքահայ երիտասարդությանը, ասվում է. «Ով հայ երիտասարդներ և երիտասարդուհիներ: Իրաքի հայ երիտասարդ բնկերության հիմնադիր մարմինը կհրավիրե ձեզ մտնել ժողովրդագլխի պաշտպանության ջոկատներու շարքերուն մեջ, ձեր մասնակցությունը բերելու համար արար և բուրդ մեր եղբայրներու կողքին, մեր նորածին հանրապետությունը պաշտպանելու պատվաժոր գործին»<sup>2</sup>:

Արտասահմանում գտնվող հայ և բուրդ ժողովուրդը այսօր իր հայացքը բեռնել է Սովետական Միության վրա, ուր ամեն մի ազգ ու ժողովուրդ, մեծ լինի թե փոքր, ստացել է իր ազատությունը, զարգացնում է իր ազգային էկոնոմիկան ու կուլ-

տուրան, ուր օրեցօր ամրապնդվում է ժողովուրդների բնիկյան բարեկամությունը:

Ահա Սովետական Հայաստանի բուրդ ժողովրդի մասին ինչ է գրել Ֆրանսահայ գրող Լևոն Մեսրոպը. «Վերջին երեսուն տարվա ընթացքում Հայաստանի բրդերը, շնորհիվ սովետական կարգ ու արքին, պետական լայն աջակցության և իրենց բնածին բնագույնական, հիմք դրին բնկերային-մշակութային նոր կյանք մը»: Այնուհետև շարունակում է. «Սովետական Հայաստանի բուրդ ժողովուրդը, իր ունեցած դրույթուններով և իր աննախընթաց վերելքով, կվալելն առաջնակարգ դիրք համայն բրդության մեջ: Սովետական Հայաստանը դարձել է փարոս մը բուրդերու ցիրուցան հատվածներուն համար, մանավանդ այս միջոցին, երբ բուրդ ժողովուրդը, Քուրբիա կամ ալլուր, իր դարավոր գոյության ամենեն մտալ շրջանը կապրի, ենթակա ցեղային ատելության, հայածանրի և բռնի ձուլման»<sup>3</sup>:

Հայ և բուրդ ժողովուրդների բարեկամության մասին հաճախակի է գրվում նաև արտասահմանյան հայ առաջադիմական պարբերական մամուլում: Սրանք իրենց բովանդակալից հողվածներում ցույց են առնում Սովետական Հայաստանում

<sup>1</sup> «Մեր նշանարանն է Յառաջ», 1955, նոյեմբերի 28:

<sup>2</sup> Նույն տեղը:

<sup>3</sup> Լ. Մեսրոպ, Փուրղեթան և բուրդեր, 1957, Փարիզ, էջ 85:

րնակվող քուրդ ժողովրդի մեծ թափով վարդապետ  
կուլտուրան, նրա առաջընթացը:

Հայ առաջադիմական թերթերից «Մեր նշա-  
նարանն է Յառաջ»-ը իր «Հայկական մշակույթը  
քրդերի համար հանդիսացավ հիմնական կա-  
մուրջ» խորագրով հոդվածում իրավացիորեն ցույց  
է առաջ հայ կուլտուրայի և զրականության քա-  
րերար և ակնհայտ ներդրածությունը քուրդ ժողո-  
վրդի նորաստեղծ կուլտուրայի և զրականության  
վրա, որը այսօր Սովետական Հայաստանում շը-  
տեսնելից է քաջելով առաջ է ընթանում<sup>1</sup>:

Նույն թերթի Բաղդադի թղթակիցն ասում է.  
«Սովետական Հայաստանի մեջ արդեն իսկ նվի-  
րագործված է հայ և քուրդ եղբայրակցությունը  
ազատ հովանու տակ»<sup>2</sup>:

Իսկ Ռուսիայում հրատարակվող «Նոր կյանք»  
հայկական թերթը իր «Տվյալներ քուրդ ժողովրդի  
մասին» հոդվածում նկատում է, որ հայ և քուրդ  
ժողովուրդների դարավոր բարեկամությունը այժմ  
մի նոր բովանդակություն է ստացել Սովետական  
Հայաստանում<sup>3</sup>: Այլ է քրդերի վիճակը Քուրդիս-  
տան, Իրաքում, Իրանում, Սիրիայում և այլ կա-  
պիտալիստական երկրներում, ուր նրանք ատա-  
պում են իրավարի ու ազիտություն մեջ: Այդ երկրը-

<sup>1</sup> Տե՛ս «Մեր նշանարանն է Յառաջ», 1963, մարտի 21:

<sup>2</sup> Նույն տեղը, 1958, նոյեմբերի 2:

<sup>3</sup> Տե՛ս «Նոր կյանք», 1963, դեկտեմբերի 6:

ներում քուրդ երիտասարդի համար ուսում ստանա-  
լը երազ է: Քուրդիստանում ապրող 4-միլիոնանոց  
քուրդ ժողովրդին կառավարությունը որպես ազդ  
չի հանաչում, քրդերին համարում է «լեռնային  
թուրքեր»:

Կոմունիստական պարտիայի գլխավորած սո-  
վետական ժողովուրդների եղբայրական դաշին-  
քում ավելի ամրապնդվեց հայ և քուրդ ժողովուրդ-  
ների բարեկամությունը: Այդ բարեկամությունը  
սլացունես է չ ավելի կամրապնդվի, քանի որ այդ  
է պահանջում լենինյան պարտիան: Սովետական  
Միության կոմունիստական պարտիայի ծրագրում  
ասված է.

«Այսուհետև ևս հետևողականորեն կիրառել  
ինտերնացիոնալիզմի սկզբունքները ազգային հա-  
րաբերությունների առարբեզում. ամրապնդել ժո-  
ղովուրդների բարեկամությունը՝ որպես սոցիա-  
լիզմի կարևորագույն նվաճումներից մեկը. ան-  
հայտ պայքար մղել ամեն տեսակ նացիոնալիզմի  
ու շովինիզմի դրսևորումների և մնացուկների դեմ,  
ազգային սահմանափակության և բացառիկու-  
թյան, անցյալի իղեսլալականացման և ժողովուրդ-  
ների պատմության մեջ սոցիալական հակա-  
սովետականների սրտման տենդենցների դեմ, այն  
սովետականների և բարբերի դեմ, որոնք խան-  
դարում են կոմունիստական շինարարությունը»<sup>1</sup>:

<sup>1</sup> «ՍՄԿՊ ծրագրեր», Երևան, 1961, էջ 139,

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹՅՈՒՆ

Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը անցյալում . . . . . 3

Արևելյան Հայաստանի քրդերը և նրանց բարեկամությունը հայերի հետ . . . . . 39

Քրդերը Առվեապահան Հայաստանում: Հայ և քուրդ ժողովուրդների լեհիկյան բարեկամությունը . . . . . 66

Խմբագիր՝ Ռ. Ղ. Վարդանյան  
 Նկարիչ և գեղ. խմբագիր՝ Գ. Ա. Խաղիկյան  
 Տեխն. խմբագիր՝ Սն. Ս. Փանիկյան  
 Վերստ. սրբագրիչ՝ Հ. Վարդանյան

ՎՅ. 09536      Պատվեր 76      Ձեռնած 1309

---

Հանձնված է արտադրության 19/II 1963 թ.:  
 Ատարագրված է տպագրության 11/IV 1965 թ.:  
 Մուղձ՝ 70×92<sup>1</sup>/<sub>32</sub>, ապ. 4,12 մամ., 4,82 պայժ. մամ.,  
 հրատ. 2,5 մամ.,  
 Գինը՝ 8 կոպ.

---

Հայկական ՍՍՍՄ ԽՆԽարների սովետի մամուլի պետական կոմիտեի պուլիզատի տրոյանսպորտության գլխավոր վարչության № 1 տպարան, Արևան, Ալավերդյան փող. № 65.